№ 258 ԵՐԵՔՇԱԲԹԻ 19 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1913 ԵՐԵՔՇԱԲԹԻ 19 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 258

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տէլէֆոն № 2—53.

ՄՇԱԿ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարություն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարությունների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տէլէֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1914 Թ. ՀԱՄԱՐ

ՀՅԻՍԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

12 և 11 ամիսը	10 ամիսը	9 ամիսը	8 ամիսը	7 և 6 ամիսը	5 ամիսը	4 ամիսը	3 ամիսը	2 ամիսը
10 ռուբ.	9 ռուբ.	8 ռուբ.	7 ռուբ.	6 ռուբ.	5 ռուբ.	4 ռուբ.	3 ռուբ.	2 ռուբ.

Դեկտեմբերի 1-ից մինչև յունվարի 1-ը 85 կոպ.

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլար. Նիւօպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Յայտարարություններ ընդունվում են բոլոր լեզուներով։ Յայտարարությունների համար պիտի վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պէտիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կ.։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակարդարում։

Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

ՊՐԷՄԻԱ

«Մշակի» ՏԱՐԵԿԱՆ այն բաժանորդները, որոնք 1914 թ. համար (սկսած յունվարի 1-ից 1914 թ.) միանուագ կամ մաս-մաս վճարած կունենան 10 ռուբլի բաժանորդավճարը, կը ստանան ԶՐԻԱԲԱՐ հետեւեալ նոր լոյս տեսնելիք գիրքը՝

„Տպագրության արուեստը եւ Հայք"

Աշխատութիւն Թիւրքահայ գրող ԱՐՇԱԿ ԱԼՊՈՅՃԱՌԵԱՆԻ

Գիրքը զարդարված կը լինի բազմաթիւ պատկերներով և տպված ընտիր թղթի վրա։ Ոչ-բաժանորդների համար գիրքը կարժենայ 2 ռուբլի։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԼՈԳՍ Է ՏԵՍԱԾ
„ՎԵՐԱԾՆՈՒՆԴ"
Ընկերաքանական ամսաթերթը
Նուիրուած
Ողբացեալ մեծ հայրենասէր
ԱԼԷՔՍԱՆԴՐ
ՔԱԼԱՆԹԱՐԻ
ՅԻՇԱՏԱԿԻՆ
(հանգուցեալի մեծադիր պատկերով միասին)
Արտատպուած է՝
Ողբացեալի վերջին յօդուածը ԾՆՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՒՄԻ խորագրով։
Կը գրեն՝ Տիգրան Քէլէքեան, Օնոիկ Զիքիթեան-Սարաֆ, Միհրան Յովհաննէսեան, Արշակ Ալպոյաճեան, Քէլեան, Արմենակ Հայկունի, Գալուստեան և ուրիշներ։
Հասցէն՝—Boîte Postale Ottomane №167, Constantinople.
(օ.մ.) առ. 1044. 5—2

ԵՐԳՈՒՆԱԼ-ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ
ԱՐՇԱԿ ԱՌԱՔԵԼԵԱՆ
ՏԵՂԱՓՈԽՎԵԵՑ
ԲԱԳՈՒԻՑ ԹԻՖԼԻՍ
Լերմօնտօվսկայա 4.
(օ. մ.) առ. 5—4

Առաջնակարգ ցիրկ
ԵՂԲ.
ԵՍԻԿՕՎՍԿԻՆԵՐԻ
Այսօր, երեքշաբթի, նոյեմբ. 19-ին, տեղի կունենայ ցիրկային խոշոր ներկայացում, մասնակցութեամբ առաջնակարգ արտիստների։ Այսօր տեղի կունենայ հասարակութեան սիրելի՝ աշխարհաշաչակ ըմբիշ Զէմբեր Ցիպսի բենֆիսը։ Գրմշամարտն—Ցիպսը Բ սպանդի հետ, անգլիական ըսկով, 50 ր. մրցանակով. այնուհետեւ՝ գոտեմարտ Իվան Կայենի և Սէպնիկի միջև, իսկ վերջապես՝ Գալատրօվի և Մայսուրաձէի, Լուկա Գոպիէվի և Ժան-Մարտիելի միջև։
Ներկայացման սկիզբը ժամը 8-ին, ըմբշամարտի սկիզբը ժամը 9½-ին, իսկ ներկայացման ուշագրը ժամը 11-ին։
առ. 1058. 1—1

ԲԺԻՇԿ
Է. ՔԵՐԵՍՏԷՃԵԱՆ
ՆԵՐՔԻՆ և ՋՂԱՑԻՆ հիւանդություններ։
(Ճառանձն, կրծքի, թոքախտ և արեան պակասություն)
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Ամեն օր՝ (Առաւօտեան ժ. 12—2-ը
(Երեկոյեան ժ. 5—7-ը
Դրաֆիկատ, 3 (Լօրիս-Մելիքովսկայա փողոցի կողմից)
(Ե.հ.կ.) առ. 774. 100—28

ԱՏԵՍՄՆԱԲՈՅԺ
Ս. ԿԷՕՆՃԵԱՆ
Ընդունում է ատամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին. պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացում, (առանց ցաւի)։
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ՝
Ամեն օր՝ (Առաւօտեան ժ. 9—2-ը
(Երեկոյեան ժ. 4—7-ը
Անկիւն Արաս-Աբաղսկայա հրապարակի և Լերմոնտովսկայա փողոցի, № 1.
(Ե.հ.կ.) առ. 679. 74—28

Թիւրքիի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Վերադառնալով արտասահմանից վերանորոգեց ներքին հիւանդությունների ընդունելությունը. առանձնապէս կրծքի, թոքերի, թոքախտի և սրտի. բժշկությունն նաև խառն ՑՈՒՐԻԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՈՅՕՐԵԿՈՎՈՎ։ Թոքերի և սրտի քննությունը լուսաւորված ՐԵՆՏԳԷՆԻՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ ցերեկ. և 5—7 ժ. երեկոյեան. 2ՋԱՒՈՐՆԵՐԻՆ ԱՌ. Ժ. 9—10 ՀՐԻ։ Бебутовская 23. тел. 7—92.
(ա.օ.) առ. 977. 100—16

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

16 և 17 նոյեմբերի

Սոֆիա.—Այն տեղեկությունը, թէ ֆրանսիացի գեներալ Ժոֆֆրը ձեռքում ունի թագաւորի հրամանի գրաւոր ընդգիրը յանուն Սավովի՝ սերբերի և յոյների վրա յարձակվելու մասին, իրականությունը չէ համապատասխանում, որովհետև այդ տեսակ հրաման երբէք չէ տրված։

Պուանկարէն համաձայնեց կատարել Բոլգարիայի խնդիրքով միջնորդի դեր յոյն-բոլգարական տարաձայնության մէջ Մակեդոնիայից եկող բոլգար գերիներին ազատելու առիթով։

Ֆէրդինանդ արքան վերադարձաւ,

—

Սոֆիա.—Գէննադիեվը տեղեկանալով Հարմանլիում, որ Թիւրքաց ներքին գործերի մինիստր Թալէաթ-բէյը գտնվում է Ադրիանուպոլում, հրաւիրեց նրան Մուստաֆա-փաշա։ Թալէաթ-բէյը հրաւէրն ընդունեց։ Երկու մինիստրները խորհրդակցեցին փախստականների հարցի մասին և եկան համաձայնության։

—

Սկոպլէ.—Սերբ իշխանությունները նոր նուաճած երկիրներում որոշում են այն 20—38 տարեկան անձանց, որոնք ընդունակ են զէնք կրելու։

—

Աթէնք.—Թագաւորը այցելեց անգլիական ծովակալին «Ինֆլէքսիբլ» զրահաւորի վրա և յետոյ ներկայ եղաւ նախաճաշին, Ծովային մինիստրն այցելեց անգլիական և ֆրանսիական ծովակալներին։ Պիրէյի և Աթէնքի ազգաբնակությունը ցնծությամբ ողջունում է նաւաստիներին։

—

Վիէննա.—Անգլիական դեսպանը յայտնեց «Նէյէ-Ֆրէյէ-Պրէսսէի» աշխատակցին, որ Անգլիան անհրաժեշտ է գտնում յանուն խաղաղության շահերի հաշուի առնել Աւստրո-Ունգարիայի առանձին շահերը Բալկաններում, հաղորդեց, որ Անգլիայի յարաբերությունները Աւստրո-Ունգարիայի հետ լաւ են և բարելաւվել են յարաբերությունները Գերմանիայի հետ, և աւելացրեց, որ եկել է Վիէննա երկու երկիրների միջև բարեկամությունը ամրապնդելու հրահանգով. Ֆրանց-Ֆէրդինանդի այցելությունը Լոնդոն կրում էր մասնաւոր բնաւորություն, չունէր քաղաքական նշանակություն։

—

Վիէննա.—Աւստրիական պատգամաւորությունն բօսնիական մասնաժողովում ֆինանսների մինիստրը յայտնեց, որ Բօսնիան և Հերցեգովինան անընդհատ զարգանում են տնտեսապէս ու կուլտուրապէս։

—

Վիէննա.—Ունգարական պատգամաւորության արտաքին գործերի մասնաժողովի զեկուցագրում շնորհակալություն է յայտնված արտաքին գործերի մինիստրին աչքի ընկնող ծառայությունների համար, որ նա երկրի ծանր ժամանակ ցոյց տուեց լիակատար անձնուիրություն, մասնանշված է, որ դիւանագէտները ամբողջ ժամանակ ուշի ուշով հետևում էին դէպքերին, որպէսզի միապետությունը չը տուժէր. անարդարացի կը լինի Բերլինոլդին պատասխանատու դարձնել այն դէպքերի համար, որոնց անկարելի էր խափանել, ոչ էլ ձևափոխել։

Ապա զեկուցագրում յայտնված է, որ միապետությունը միշտ էլ աջողությամբ կարող կը լինի պաշտպանել իր շահերը։ Անհրաժեշտ է բարեկամ մնալ Թիւրքիայի հետ ու հաստատել լինել Բուլգարիայի հետ։ Յայտնելով գոհունակություն Գերմանիայի և Անգլիայի մերձեցման առիթով, զեկուցագիրը միանում է Բերխտոլդի յայտնած մտքին, թէ պէտք է վերջապէս բարելաւել յարաբերությունները Աւստրիայի և Ռուսաստանի միջև։

—

Վիէննա.—Որսից վերադարձաւ սպանական թագաւորը։

—

Մունդէն.—Մամուլը հանգիստ տոնով քննադատում է Մոնդօլիայի առիթով կապված ռուս-մոնդօլական համաձայնությունը, գոհունակություն է յայտնում վէճի վերջնական լուծման համար, ցանկանում է որպէսզի յետագայում բարի յարաբերություններ հաստատվեն Ռուսաստանի հետ։

—

Ծոկիօ.—Մինիստրների խորհուրդը ընդունեց 1914 թ. բիւջէն։ Մախքերը 550 միլիոն են, եկամուտները՝ 20 միլիոնով աւելի։

—

Պարիզ.—Պատգամաւորների պալատում Պուանկարէ յետոյ փոխառությունը քննադատեց Կաստոն, որ ասաց, թէ դեմոկրատիան չի ընդունի նոր հարկերը՝ մինչև որ ունևոր դասակարգերը չը համաձայնեն զոհաբերություններ անել։

—

Պարիզ.—Արմատական կուսակցությունը վճիռ կայացրեց, որ մինիստրներ Պիշոնը, Մասսէն, Լիմանը, Կլէմանտէլը և Կլոցը, նաև մինիստրի օգնական Դուրբէլին, որոնց առաջարկված էր կամ մինիստր դառնալ կամ պատկանել կուսակցությանը, չեն հրաժարվել, հետևաբար հաշվում են կուսակցության կազմից դուրս եկած։

Դոբլին.—Բօնար Լոուի և Կարսոնի ճառերի ժամանակ թագաւորական թատրոնում, մի քանի հազար հոգուց բաղկացած ամբոխը ժողովվեց թատրոնի առաջ, երգելով ազգային երգեր, նետելով ձուեր ու քարեր և կրակելով ատրճանակներից։ Վիրաւորվեց մի կին։

—

Հռոմ.—Պատգամաւորների պալատի նիստը բացվեց Մարկօրի նախագահությամբ, որ իր ճառի մէջ ողջունեց պատգամաւորներին և շօշափեց ընթացիկ դէպքերը։ Երբ նախագահը խօսեց Լիվիայի պատերազմի մասին, սոցիալիստ դէ-Զիօվանին ընդհատեց նրան աղաղակելով՝ «Կորչի պատերազմը»։ Ամբողջ պալատը, բացի ծայրայեղ ձախակողմեաններից, ոտքի կանգնեց և պատասխանեց բացագանչելով «Կեցցէ՝ Իտալիան» և երկար ծափահարեց։ Մարկօրան իր ճառն աւարտեց բացագանչելով՝ «Կեցցէ՝ Իտալիան», որ ծածկվեց բոլոր պալատի ծափահարությամբ, բացի ծայրայեղ ձախակողմեաններից։

—

Պետերբուրգ.—Եալտա մեկնեց մինիստրների խորհրդի նախագահը։

ՌՈՒՍ-ԲՈԼԳԱՐԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(«Россія» թերթի յօդուածը)

—

Պետերբուրգ, 16 նոյեմբերի

Բոլգարիայում կուսակցությունները, գործիչները և լրագիրները շարունակում են յախուռն յարձակումները, նպատակ ունենալով որոշելու, թէ ով է մեղաւոր երկրին հասած դժբաղդության մէջ։ Այդ յարձակումների մէջ որոնում են ոչ միայն քաւության նոխազին, որի վրա կարելի է բարդել ժողովրդական բովանդակ վիշտն ու պետական ամբողջ քայքայումը, այլ և դրա հետ միասին կամենում են անցեալի դասերից օգուտ քաղել ապագայի համար։

Այդ ձգտումը ինքնին հասկանալի կը լինէր։ Կարելի էր միայն ողջունել, որ կամենում են յայտնագործել պարտության իսկական պատճառները, որպէսզի ապագայում չը կրկնվեն հին մեղքերը, որոնք Բոլգարիային անդունդի եզրը հասցրին։

Սակայն, տարված՝ կրքով ու իրանց երեսները պարզ դարձնելու բնական ցանկությամբ, դժբաղդության իսկական յանցաւորներից շատերը դիմում են զրպարտության անվայել միջոցների, կամենալով մոլորեցնել կողմնակի անձանց։ Խելառ կուսակցությունը այդ մարդիկը պատրաստ են մոռացության տալ ամեն անցեալը, որ արեան ու զոհերի կապ հաստատեց Ռուսաստանի և նրա ստեղծած Բոլգարիայի միջև։ Ժողովրդի սրբությունն սրբոցը՝ նրա հաւատն է, բայց այդ նրանց համար սոսկ քաղաքական դաւի զէնք է, ու նրանք պատրաստ են հրաժարվել անգամ ուղղափառությունից ու կրօնափոխ լինել, յուսալով ձեռք բերել աւելորդ միջոց ևս, որպէսզի բոլգար ժողովուրդը իրանց անձնական ինտրիգների հլու խաղալիք դարձնեն։

Այդ բոլոր զրպարտություններին ու կեղտոտ բարբաջանքներին Ռուսաստանը ցայսօր չէր պատասխանում, անջատելով Բոլգարիան և բոլգար ժողովուրդը այն պղտոր վրդովուրից, որ բարձրացաւ ժողովրդական կեանքի վերեւ։ Թող իրանք բոլգարները պարզեն փաստերի այն յեղաշրջումը, որպիսին նրանց ամեն օր հրամցվում է։ Կենսունակ և ուժեղ ժողովուրդը կը յաղթահարէ ներկայ իր անաջողությունները և ցոյց կը տայ ապրելու և վերածնվելու այն ընդունակությունը, որ միշտ կը գտնէ համակրանք ու աջակցություն մեծ Ռուսաստանի կողմից։ բայց մենք չենք կարող նախազգուշացման խօսք չասել այն ուղղությամբ առիթով, որպիսին կատարում է տիրող դառնալ Բոլգարիայում։ Այդ ուղղությունը արդէն չէ բաւականանում զրպարտիչ արշաւանքով Բոլգարիայի սահմաններում. ինչպէս հաղորդում է Պետ. Հ. Գործ.-ը, աւստրիական ազդեցիկ «Բէյլիս-Պոստ» լրագրում երևացել է յօդուած «Ռուսական զօրահաւաքի փորձնական գաղտնիքը» վերնագրով։ Այդ յօդուածի ամբողջ տոնը և բովանդակությունը յար և նման են այն ամենին, որ խօսվում ու խրախուսվում է ներկայումս այն մարդկանցից, որոնք երևացել են Բոլգարիայի պետական կեանքի երեսին։

Անկարելի ընդունելով միջամտել Բոլգարիայի ներքին կեանքին, մենք թողնում ենք, որպէս զի ինքը բոլգար կառավարությունը ընտրէ ազատօրէն այնպիսի ուղի, որպիսին նա կը համարէ անհամեմատ համապատասխան, բայց և որովհետև մենք չենք կարող սառնասիրտ մնալ հանդէպ բոլգար ժողովրդի տառապեալ վիճակին, մենք կամենում ենք, որպէս զի Սոֆիայում որոշակի ըմբռնեն, թէ քաղաքական դաւերի ու երկդիմի խաղի ճանապարհի վրա Ռուսաստանը չէ կարող անորոշ ուղեկից լինել։ Բոլգարիայի գերագոյն ղեկավարների խելացկությունից է կախված վճռել, թէ կամենում են արդեօք նրանք խուսափել լրանց երկրի համար վտանգաւոր արկածախնդրության դարաշրջանից, թէ ոչ։ Եթէ ճիշտ է, որ աւստրիական լրագրի յօդուածը քաղված է հեղինակաւոր բոլգարական աղբիւրից, ուրեմն հասկանալի է դառնում, թէ ինչ մարդիկ են նրանք, որոնք մօտիկ ապագայում կոչված են օգնելու Ֆերդինանդ թագաւորին Բոլգարիան խաղաղեցնելու դժուարին գործում։ Իրանց միապետին պաշտպանելու ձգտումով նրանք գործում են իբրև նրա թշնամիներ, որովհետև չեն հասկանում, որ այդօրինակ պաշտպանությունը յանուն արտասահմանեան աուդիտորիայի բարեացակամությունը ձեռք բերելու պատիւ չէ բերում ապա Բոլգարիայի ղեկավարին։

Այնուհետև կիսապաշտօնական լրագիրը, ընդգծելով որ ներկայ բոլգարական անաջողությունների մէջ բնաւ Ֆէրդինանդ արքան մեղաւոր չէ, աւարտում է իր յօդուածը այսպէս.

Անցեալի փորձը պերճախօս կերպով ապացուցանում է, որ հակառուսական ագիտացիան չէ կարող խոր արմատներ ձգել Բոլգարիայում և որ վաղ թէ ուշ բոլգար ժողովուրդը վերստին ոտք կը դնէ այն փորձված ճանապարհի վրա, որ նրան կը մերձեցնէ Ռուսաստանին, այն Ռուսաստանին, որ հանապազ պատրաստ է մեկնել իր եղբայրական ձեռքը։ (Հ. Գ.)

ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(Հեռագրով)

Վլադիվոստոկ, 17 նոյեմբ.

Խորապէս ցաւում եմ ծանր կորստի համար։ Խոնարհվում եմ իդէալական նարոդնիկ Ալէքսանդր Քալանթարի գերեզմանի առաջ։ Արշակ Փիրումեան

—

Ալէքսանդրոպոլ, 12 նոյեմբ.

Մի դատապարտելի լռությամբ մենք մինչև այսօր չը շտապեցինք մեր յուսահատ ողբն էլ խառնել այն բազմաթիւ լացի ու հառաչանքների ձայներին, որոնք լսվեցին աշխարհի բոլոր ծայրերից, մեր ամենքից սիրված ու յարգված Ալէքսանդր Քալանթարի անսպասելի մահվան առիթով։

Մեր այս յապաղման պատճառը այլ էր։

Գանվելով հոգեպէս ու ֆիզիկապէս ընկճված դրության մէջ, մեր ձեռքը չէր բարձրանում ողբի ու ցաւակցության խօսքեր գրել այն ազնիւ մարդու կորստի առիթով, որին ամենից շատ մենք ենք սիրել ու յարգել, մենք ենք լսել ու հաւատացել։

Թող կերպով վշտացած այդ ազնիւ հասարակական գործչի վաղաժամ մահվամբ, մենք մեր սրտի անսահման վիշտն ու կսկիծն ենք միացնում այդ անփոխարինելի կորստի առիթով արձակված հառաչանքներին ու ողբերին։

Թող օրհնվի նրա անբիծ յիշատակը, յիշատակը այն բարի, առաքինի ու խաղաղասէր հասարակական գործչի, որն իր կենդանի օրինակով միշտ կարողանում էր տարածել իր շուրջը խաղաղություն ու անդորրություն։

Յաւիտենական հանգիստ նրա նուիրական ճաճանչին։ Պետրոս Մաճառեան

—

Երևան, 30 հոկտ.

Խոնարհաբար խնդրում ենք ընդունել և մեր անկեղծ ցաւակցությունը՝ անմոռանալի և մեծ հրապարակախօս Ալէքսանդր Քալանթարի վաղաժամ մահվան առիթով, որպիսի մահը պատճառեց ամբողջ հայութեան անսահման վիշտ ու կսկիծ։

Մենք՝ ծառայողներս երկար տարիներ կարդալով նրա հոգի թարմացնող, ոյժ ու եռանդ ներշնչող հանճարաւոր առանցքորդողները՝ անկարող ենք մոռանալ նրան և երդվում ենք նրա սուրբ անուամբ՝ այսուհետև ևս հաւատարիմ մնալ նրա պաշտած դրօշակին, վառ պահելով մեր սրտի խորքերում նրա ազնիւ գաղափարներն ու անմահ յիշատակը։

Արտասուախառն ծունկ չոքելով, խոնարհվում ենք նրա՝ մեզ բոլորիս համար թանգագին ուսուցչի թանգագին շիրիմի առաջ։

Թիֆլիսի Առևտրական Բանկի Երևանի բաժանմունքի հայ ծառայողներ՝ Մ. Յակոբեան, Ե. Տէր-Յովսէփեան, Մ. Սկանդարեան, Հ. Աբրահամեան, Վ. Թովմասեան, Պ. Աղաջանեան, Վ. Եդիգարեան։

—

Կանակ (Արևելեան Սիբիր), 6 նոյեմբ.

Ալէքսանդր Քալանթարի մահվան բօթը ես առայ դեռ հոկտեմբերի 30-ին, սակայն այնքան անսպասելի էր ինձ համար նրա մահը, այն աստիճան մեծ էր իմ մէջ հա-

ւատը դէպի նրա անժամանակ վախճանը, որ երբ Հեռագր. Գործակալութեան հեռագիրը գուժեց այդ մասին, ես ուղղակի մնացել էի ապշած, քար կտրած։ Ինքս չէի հաւատում իմ աչքերին։ Զորս անգամ կարդացի հեռագիրը, ապա թերթը անվճռականօրէն վայր դնելով սեղանի վրա՝ որոշեցի սպասել «Մշակի» հարցերին։

Եկան և «Մշակի» թերը։ Ո՜հ, այն ժամանակ արդէն ընդմիշտ խորտակվեց իմ վեհ հաւատը։ Ընկել, կործանվել էր հաստատուն կաղնին, յաւէտ մարել էր հայութեան պայծառ աստղը, լուսատու ճրագը։

Չը կայ այլևս ազնիւ հայը, ճշմարտասէր հրապարակախօսը, կօրրեկտ և անաչառ հասարակական գործիչը, հայ գիւղացիութեան անդաւաճան բարեկամը։

Ցաւերժ յիշատակ խաղաղ կուլտուրայի իդէալիստ մարտիկին։

Անվերջ յարգանքներ հայ առաջադիմական բանակի անզուգական ներկայացուցչի հոդաթմբին։ Ենովք Մ. Նաղարեան

Գոմ գիւղ (Ախալք. գաւ.), 30 հոկտ.

Կորաւ մեր միակ յոյս՝ անգնահատելի Ալէքսանդր Քալանթարը։ Քանի՞-քանի՞ անգամ մեր գաւառն այցելելիս, մեզ յուսադրում էր, խրատում երաշտաբերի համար շինել Ջրաբաշխներ, և որքա՜ն մեր գիւղացիութեան սրտին ու հոգուն մօտիկ համակրելի անձնաւորութիւն էր, մեզ համար մեծ ապագայ ու յոյս էր։

Ո՜վ դու մահ, անգութ սուսեր, մեր սիրտը արեան ծովակ դարձրիր։ Ինչ անմխիթար հայեր ենք եղել։ Համբոյր ահիւնիդ, պաշտելի Քալանթար։

Ի դիմաց ողջ հասարակութեան՝ Ց. Տէր-Սիմէօնեան, Դ. Ղուկասեան, Գ. Դեմ չանեան, Մ. Սողոմոնեան, Անդ. Մովսէսեան։

ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐԻ ՄԱՀՎԱՆ ՇՈՒՐՋԸ

Ալ. Քալանթարի մահվան առիթով խմբագրութեանս ցաւակցական գրութիւններ են ուղղել ի միջի այլոց և հետևեալ անձինք.

Դերբէնդից՝ Արշակ Մարտիրոսեանց։
Երևանից՝ Շատ-էլ-Արաբ։
Նովօրօսիյսկից՝ Միհրան Մարիմեան։
Զբնոմօրից՝ Սարգիս և Մկրտիչ Սիմաւօնեաններ։
Խարարօվկից՝ Յովհաննէս Գր. Սէթեան։
Մէշհէդսէրից (Պարս.)՝ Դաւիթ Փանոսեանց։
Մօսկվայից՝ Ոսկու-Զօն։
Նուխուց՝ Արշակ ք. Փալչեանց և Մկրտիչ Գէորգեան։
Ջաջուռից՝ Հայրապետ Տոնոյեանց։
Սաղասիլօ կայարանից՝ Շաքրօ Զալիւեանց։
Եկատերինէնգէլդից՝ լուսանկարիչ Եղուանդ Խանդուլեան։
Նշտարակից՝ Լ. Խուդավերդեան։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ 2-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Նոյեմբերի 16-ին, շաբաթ օրը, երեկ. ժ. 8-ից համագումարի անդամները ժողովվում են քաղաքային վարչութեան շինութեան մէջ փոխադարձ ծանօթութեան համար։

Թիֆլիսի քաղ. վարչութեան անդամները քաղաքագլխի պաշտօնակատար իշխ. Ա. Մ. Արղութեան - Երկայնաբազուկի գլխաւորութեամբ սիրալիր կերպով ընդունում են բոլորին և ծանօթացնում միմեանց հետ։ Տեղի է ունենում համերաշխ նախնական մաքերի փոխանակութիւն ներկայ եղողների միջև, որոնք ապա հիւրասիրվում են վարչութեան կողմից թէյով ու մրգեղէնով։ Դումայի պահլեհում իշխ. Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկը շնորհաւորում է համագումարի անդամների գալուստը Թիֆլիս։ Ապա ուրուագծվում է սկզբնական որոշումն պրեզիդիումի կազմի մասին։

Հետևեալ օրը, կիրակի, նոյեմբ. 17-ին, Ժողովրդական Տանը տեղի ունեցաւ համագումարի հանդիսաւոր բացումը։ Բացի համագումարի անդամներից, կազմակերպիչ մասնաժողովից, մամուլի ներկայացուցիչներից, բացմանը ներկայ էին հօֆմէյստէր Պետերսոն, նահանգապետ Զէրնեավսկի, Կովկ. ուսումն. շրջանի հոգաբարձու Բուդոլֆ, պետական բանկի կառավարիչ կամերհէր Բէզօբրազով և այլ հրաւիրված պաշտօնական անձիք։

Ուղիղ ժամը 11½-ին հօֆմէյստէր Պետերսոնը բացում է համագումարը Կովկասի փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրոնցով-Դաշկովի անունից. «Դուք գիտէք,—ասում է Պետերսոնը,—թէ ինչպէս ուշադիր վերաբերմունք է ցոյց տալիս կոմսը դէպի ամեն մի հասարակական ձեռնարկութիւն և աշխատում է ըստ հնարաւորութեան ընդառաջել իրական օգնութիւն ցոյց տալու այդ ձեռնարկութիւններին։ Յայտարարում եմ կոմսի անունից ներկայ համագումարը բացված ցանկանալով թէ նրա և թէ իմ կողմից լիակատար աջակցութիւն համագումարին. թող Աստուած օգնէ ձեզ»։

Ապա քաղաքագլխի պաշտօնակատար իշխ. Արղութեան-Երկայնաբազուկ ասաց մի բովանդակալից ճառ, մէկիկ-մէկիկ թելով ռուսական քաղաքային ինքնավարութիւնների մի շարք հերթական կարիքները և մասնաւորապէս Կովկասի քաղաքների անհրաժեշտ պահանջները։ Քաղաքային գործիչների համագումարները կոչված են ընդգծելու քաղաքային բարեկարգութիւնը իր իսկական բարձրութեան վրա դնելու իրական միջոցները։ Կանգ առնելով ֆինանսական անբաւարար կազմակերպութեան վրա, հռետորը մատնանշում է, որ Կովկասում քաղաքային ինքնավար մարմինների գործունէութիւնը ուղղված է գլխաւորապէս ժողովրդի հիւանդութիւնները ամոքելու և կրթական կարիքները բաւարարեցնելու գործին։ Շեշտելով քաղաքային թերի ընտրողական կողմը, հռետորը յիշեցրեց զէմստվոյի բացակայութիւնը, որի գոյութեամբ Կովկասի քաղաքների և գիւղերի կեանքը կարող էր լիովին բարւոքվել։

Վերջում իշխանը յայտնեց, որ ներկայ համագումարը զբաղվելու է միմիայն Կովկասեան քաղաքների սանիտարական այժմեան դրութեան ծանօթութեամբ և սանիտարական բարեկարգութեան խնդրով։ Առաջարկելով գործել յիշեալ ծրագրով, քաղաքագլխի պաշտօնակատար Ա. Մ. Արղութեանը ողջունում է համագումարը Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան կողմից և առաջարկում է շնորհակալութիւն յայտնել Կովկասի փոխարքային, որ մասնաւորապէս աջակից եղաւ համագումարի մաքի իրականացմանը։

Իշխ. Ա. Մ. Արղութեանի առաջարկութիւնը ընդունվում է ծափահարութեամբ և անմիջապէս խմբագրվում է շնորհակալական հեռագիր յանուն Կովկասի փոխարքայի։

Նոյնպէս ընդհանուր ծափահարութեամբ կոմս Ի. Ի. Վօրոնցով-Դաշկովը ընտրվում է համագումարի պատուաւոր նախագահ։

Քարտուղար Զաբար կարդում է հիւանդ և անկողնում պառկած քաղաքագլուխ Ալ. Խատիսեանի գրութիւնը, որով նա մեծ վիշտ է յայտնում, որ տկարութիւնը զրկում է իրան համագումարին ներկայ գտնվելու հնարաւորութիւնից, ջերմ ողջունում է նրա անդամներին, ցանկանալով բեղմնաւոր գործունէութիւն, և շնորհակալութիւն է յայտնում համագումարի բացումը իրանց ներկայութեամբ պատող պաշտօնեաներին։

Այնուհետև ողջունում են համագումարը Բագուի քաղաքագլուխ Լ. Բիչ, որ յոյս է յայտնում, թէ կովկասեան քաղաքների ներկայացուցիչների 3-րդ համագումարը կը կայանայ Բագու քաղաքում։ Բիչը առաջարկում է նաև համագումարի կողմից ցանկութիւն արտայայտել Ալ. Խատիսեանին իր տկարութեան պատճառով։

Իշխ. Ա. Մ. Արղութեան զեկուցանում է, որ անմիջապէս այդ իմաստով հեռագիր կուղարկվի քաղաքագլխին։

Ողջունում են դարձեալ Տուլայիվ—Թիֆլիսի վրաց ազնուականութեան կողմից։

Զիկովանի ողջունում է Քութայիսի քաղ. վարչութեան կողմից։ Հեռաւորը յիշեցնում է, որ 2½ տարի առաջ Թիֆլիսում կայացած քաղաքների գործիչների 1-ին համագումարը մեծ ոգևորութեամբ մի շարք անյետաձգելի բարելաւումներ մատնանշեց, ինչպէս և բուռն ցանկութիւն յայտնեց տեսնել զեմստվո Կովկասում։ Բայց, աւաղ, մինչև օրս այդ ցանկութիւնները մնացին լոկ ցանկութիւններ։ Առաջարկելով, սակայն, չը յուսահատվել, Զիկովանին յոյս է արտայայտում, որ գոնէ Թիֆլիսը առաջինը կը տեսնէ այնպիսի վիճակ, որի գոյութեամբ քաղաքային համեստ գործիչները չեն դատապարտվի այլ ևս իրանց իրաւազուրկ դրութիւնից։

Բժ. Լունկեվիչ ողջունում է Զինուորական Կովկ. Բժշկական Ընկ. սանիտարական վարչութեան և Կայսերական Բժշկական Ընկերութեան վարչութեան կողմից։

Լ. Ղուկան՝ Բագուի նաւթարդիւնաբերողների համագումարի խորհրդի կողմից և ցանկանում է, որպէսզի համագումարի որոշումները ստանան գործադրութիւն։

Զաբար, կարդալով Պետերբուրգում լոյս տեսնող «Городское Дѣло» թերթի ողջոյնի հեռագիրը, իր կողմից խօսում է քաղաքային ինքնավարութիւնների գործունէութիւնը լրջորէն ու անկողմնապահ քննադատող մամուլի խոշոր դերի մասին։

Եղան ողջոյններ Գօրի քաղաքից և Արտապրոցական Կրթութիւն Տարածող Ընկերութեան կողմից, որին նպաստ է տալիս Թիֆլիս քաղաքի վարչութիւնը։

Համագումարը շնորհաւորել են հեռագրով գեներալ Միշլաէվսկին, օգտակար գիտելիքներ տարածող Երևանի ընկ., Թէլաւի քաղաքային աւագը, Ալէքսանդրօպոլի քաղաքագլուխ Կամսարական։

Կրկին ողջունում են Սարգսեան Թիֆլիսի դեղագործների ընկ., Սբաշիձէ՝ Շօրապանի մարգանցարդիւնաբերողների համագումարի խորհրդի կողմից։

Ապա իշխ. Ա. Մ. Արղութեան առաջարկում է ընտրել համագումարի պրեզիդիումը։ Ըստ օրինի համագումարի նախագահ համարվում է քաղաքագլուխը, ներկայ դէպքում հիւանդ Խատիսեանի փոխարէն՝ ինքն է, իբրև նրան փոխարինող։ Ինչ վերաբերում է նախագահի օգնականների հարցին, իշխանը ասում է, որ երեկ՝ դումայի դահլիճում նախնական խորհրդակցութիւնը կանգ առաւ հետևեալ անձերի վրա։

Բիչ Լուկա Լ.—Բագուի քաղաքագլուխ։
Սկվօրեկով Միխ. Դ.—Եկատերինօդարի քաղաքագլուխ։
Բաէվ Գէօրգի Վ.—Վլադիկավկազի քաղաքագլուխ։
Քալանթարեան Գրիգոր Ս.—Շուշու քաղաքագլուխ։

Համագումարը ծափահարութեամբ հաստատում է այդ ցուցակը։

Քարտուղարական մասի ընդհանուր դիւանավարութիւնը նախագահի առաջարկութեամբ յանձնվում է բժշկա-սանիտարական տեսուչ Կ. Ստեփանեանին։ Իսկ իբրև քարտուղարներ ընտրվում են Շվարց Լ., Մելիք-Ալլահվերդեան Բ., Զաքարիձէ Ս., Մաւէվիչ, Սլօնէվսկի Ս., Աղայէվ Հ.։

Մինչ ընտրվածները կը գրաւեն իրանց տեղերը, լինում է 5 րօպէի չափ ընդմիջում։

Ընդմիջումից յետոյ Թիֆլիսի քաղ. վարչութեան անդամ Միք. Աթաբէկեան կարդում է մի ամփոփ զեկուցում այն իրաւունքների ու պարտականութիւնների մասին, որ ունենալու է ամեն մի քաղաքային ինքնավարութիւն քաղաքի բարեկարգութեան գործում։

Զեկուցումից յետոյ ժամը 1-ի մօտերը նախագահը յայտարարում է համագումարի 1-ին նիստը փակված և հրաւիրում է անդամներին ժ. 2-ին լինել Հաւլաբարում, եղբ. Զուբալօվների հաշուով կառուցված երեխաների հիւանդանոցի բացման հանդիսին, որի նկարագրութիւնը տալիս ենք առանձին։

Երեկոյեան ժամը 8-ին, միևնոյն օրը, Զուբալօվի անուան ժողովրդական տանը ի պատիւ համագումարի անդամների տեղի ունեցան ռուսերէն, հայերէն, վրացերէն և թուրքերէն ներկայացումներ։ Խաղացվեցին Գրիբօէդովի «Խելքից պատուհաս» պիէսի 4-րդ գործողութիւնը ռուս թատերասէրների մասակցութեամբ, Մանուչարեանի 1 գ. «Հէքիաթ» դրամն, Գեղէվանովի «Զոհ» վրացերէն դրամայի 1-ին արարածը և թիւրքերէն «Դուրսուն Ալի Բալի-Բաղա» վոդեվիլը։ Մինչնարարներին հիւրերը հիւրասիրվեցին թէյով ու մրգեղէնով։

Երէկ, երկուշաբթի, համագումարի երկրորդ նիստին (առաւօտեան նիստ) կարդացվեցին 1) Կովկասի փոխարքայի հեռագիրը, որով յայտնում է, որ ուրախութեամբ ընդունում է իրան առաջարկած պատուաւոր նախագահութիւնը և շնորհակալութիւն յայտնելով՝ մաղթում է հաջողումարին արդիւնաւոր գործունէութիւն, և 2) քաղաքագլուխ Ա. Խատիսեանի հեռագիրը, որով ջերմ շնորհակալութիւն է յայտնում իրան արտայայտած բարեմաղթութիւնների համար։ Ապա կարդացվեցին հետևեալ զեկուցումները.

1) Բժ. Հասան-բէկ Աղայէվ՝ «Բժշկա-սանիտարական գործի կազմակերպութեան մասին Գանձակում»։

2) Զիկովանի՝ «Քութայիսի քաղ. հիւանդանոցի մասին»։

3) Լօրտկիպանիձէ՝ «Քութայիսի ներկայ սանիտարական դրութիւնը»։

4) Մեծատուհեան «Ախալքալաքի ներկայ դրութիւնը և նրա կարիքները բարեկարգութեան գործում»։

5) Բուդնէվ՝ «Ի՞նչ է հարկաւոր Գօրի քաղաքի բարեկարգութեան համար»։

6) Էյրանեան՝ «Անբուժելի հիւանդութիւնների մասնագիտական հիւանդանոցների մասին»։

Երէկ երեկոյեան տեղի ունեցաւ համագումարի 3-րդ նիստը, ուր Նոյնպէս կարդացվեցին զեկուցումներ։

Որովհետև առաջին զեկուցման մէջ զեկուցանողը մատնացոյց արեց ժողովրդական մի աղէտի վրա, այն է ափիոնի գործածութիւնը, ուստի համագումարը իրաւ յայտնեց, որ կառավարութիւնը միջոցներ ձեռք առնի ափիոնի գործածութիւնը խըստիւ արգելելու։

Այսօր երեկ. ժամը 8-ին տեղի կունենայ համագումարի չորրորդ նիստը, ուր կը լինեն վեց դասախօսութիւն։ Ե.

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ԲԱՑՈՒՄԸ

Կիրակի, նոյեմբ. 17-ին, Հաւլաբար կոչված քաղաքամասում բացվեց ազգաբնակութեանը այնքան անհրաժեշտ երեխաների հիւանդանոցը, որ կից է Արամեան քաղաքային հիւանդանոցին։

Նոր հիւանդանոցի գեղեցիկ շէնութիւնը համապատասխանում է ժամանակակից տեխնիկական ու առողջապահական բոլոր պահանջներին։

Նախքան բացումը ռուս հոգևորականութիւնը հոգեհանդիսաւոր կատարեց հանգուցեալ Զուբալօվների յիշատակին։

Դէռ ժամը 1½-ից գալիս են մեծ թիվով հրաւիրված անձինք, պաշտօնեաներ, հասարակական հիմնարկութիւնների, հաստատութիւնների և ընկերութիւնների ներկայացուցիչներ։ Պաշտօնական անձանց թիւումն են փոխարքայի զինուորական մասի օգնական գեներալ Շատիլով, հօֆմէյստէր Պետերսոն, կօմենդանտ Զիրկով։ Իրանց կանանց հետ, նահանգական ազնուականների պարագլուխ իշխ. Աբխազի, ոստիկանապետ գեներալ Զասիպկին և այլք։ Ներկայ էին նաև մուֆթին, հայ-կաթոլիկների առաջնորդ Սարգիս վարդ. Տէր-Աբրահամեան՝ Դիոնեսիոս հայր սուրբի հետ, հրէաների բարբին (Նկատելի էր միայն հայոց հոգևորականութեան բացակայութիւնը)։

Շուտով բարեհաճեց գալ նաև Կովկասի փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրոնցով-Դաշկովը կոմսուհի Ելիզավետա Անդրէեվնայի հետ և իր շքախմբի ուղեկցութեամբ։

Ժամը 2 և 15 ր. Վրաստանի էկզարխ Ալէքսէյ արքեպիսկոպոսը երեք եպիսկոպոսների սպասաւորութեամբ կատարում է պատշաճ կարգը ներկայութեամբ բարձր հիւրերի, քաղաքային վարչութեան անդամների, բազմաթիւ բժշկիների, մամուլի ներկայացուցիչների, կանանց և այլն և այլն, որոնք բաւիս բուն նշանակութեամբ լցրել էին հիւանդանոցի սրահները և մեծ սենեակը։

Աւարտելով եկեղեցական կարգը և օրհնելով հիւանդանոցը ս. ջրով, էկզարխը խօսեց մի գեղեցիկ ճառ, բնարան ընդունելով Յիսուսի բժշկութիւնը աւազանի մօտ ընկած բորոտ հիւանդին։ Նորին բարձր սրբազնութիւնը ցանկութիւն յայտնեց, որ բժիշկը, օժտված իր գիտութեամբ, ապաւինէ նաև Աստուծոյ շնորհքին։

Ապա ներկայ խուռն բազմութեան առաջ քաղաքագլխի պաշտօնակատար իշխ. Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկ խօսեց մի ճառ հիւանդանոցի ծագմա՝ մասին։ Ինչպէս յայտնի է, հիւանդանոցը կառուցված է Լ., Պ. և Կ. Զուբալով եղբայրների հաշուով ի յիշատակ իրանց հօր և եղբօր։ Հիւանդանոցի կառուցման գործը գտնվում է քաղաքային ինքնավարութեան ձեռքում և նա կոչվելու է քաղաքային։ Յիշեցնելով Զուբալօվների միւս բարեգործութիւնների մասին, իշխ. Արղութեան ջերմ շնորհակալութիւն յայտնեց Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան կողմից պատուաւոր քաղաքացիներ Զուբալօվներին և առաջարկեց բացման առիթով ներկայ եղողների անունից ուղարկել շնորհաւորական հեռագիր, որը խնդոյն կազմվեց։

Իշխան Արղութեան շնորհակալութիւն յայտնեց նաև փոխարքային դէպի Թիֆլիսի քաղաքային վարչութեան ձեռնարկութիւնները աջակից վերաբերմունք ցոյց տալուն համար։

Դրանից յետոյ Զաբար կարդաց քաղաքագլուխ Ալ. Խատիսեանի նամակը, որ տկարութեան պատճառով գրաւոր կերպով ողջունում է հիւանդանոցի բացումը իբրև մի օգտակար հաստատութիւն ի թիւս քաղաքային այլ հիմնարկութիւնների։ Վերջում Ալ. Խատիսեան յոյս է յայտնում, որ շուտով կը բացվի և հոգեկան հիւանդութիւնների բուժարանը։

Բժշկա-սանիտարական տեսուչ Կ. Ստեփանեան զեկուցանում է հիւանդանոցի ներսի կազմակերպութեան մասին։ Հիւանդանոցի անօրէնն է երեխաների հիւանդութիւնների մասնագէտ Ռոմիկեան, կառուցանողն եղել է ինժեներ Զուբարեան, բաղկացած է հինգ սենեակներից 100 մահճակալով, ծախսվել է 120,000 ր. կառուցման վրա, 29,000 ր. կահաւորման վրա. բացի դրանից՝ եղբ. Զուբալօվները նուիրում են դարձեալ 46,500 ր. հիւանդանոցի ծառայողների ու տարեկան պահպանման համար։ Հիւանդանոցը ունի նաև 5 առանձին մահճակալ այն երեխաների համար, որոնք իբրև հիւանդներ մնում են հիւանդանոց, և մի օրում այդտեղ պէտք է որոշվեն երեխաների հիւանդութիւնների տեսակները։

Ապա ողջունեցին հիւանդանոցի բացումը բժ. Յարութիւնեան բժիշկների կօրպօրացիայի կողմից, Գուրկօ՝ Միքայէլեան հիւանդանոցի կողմից, նաև եղաւ ողջոյն Կայս. Բժշկ. Ընկ. կողմից և այլն։

Այնուհետև բոլոր ներկայ եղողները, որոնց թիւումն էին նաև կովկասեան քաղաքների ներկայացուցիչների 2-րդ համագումարի բոլոր անդամները, հիւրասիրվեցին թէյով, սուրճով և մրգեղէնով։

Ցիշենք նաև, որ մաղթանքի ժամանակ երգում էր փոխարքայի կօզակների երգեցիկ խումբը։ Փոխարքայի անցնելու առիթով Հաւլաբարի փողոցները զարդարված էին դրօշակներով և գորգերով։

Կախէթինսկայա հրապարակի վրա քաղ. իրաւասու Նոնսուիգարեանը մատուցելով փոխարքային աղ ու հաց՝ մի ճառով ողջունեց նորին պայծառափայլութեան։

Ժամը 4-ն անց հանդէսը աւարտվեց ընդհանուրի զոհունակ տրամադրութեան տակ։ Ես

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՕՆԴԻ ՕԳՏԻՆ

Նոր-Նախիջևան, 13 նոյեմբ.

Այսօր փոխադրեցի սինօդ դպրոցական ֆօնդի համար 1030 ր., որից հաղարը ստացել եմ Մանուկ Պողոլվից, իսկ երեսունը փոխարէնը իմ պաղների Քալանթարի, Խատիսեանի և Զաւարեանի վրա։ Ուրեմն մինչև այսօր փոխադրել եմ 24,455 ր.։

Գր. Զալխուշեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Հին-Նախիջևան, 11 նոյեմբ.

Արդէն 2 շաբաթ է, ինչ մեր դժբաղդ քաղաքի նոյնիսկ գլխաւոր փողոցները չեն լուսաւորվում շնորհիւ այն հանգամանքի, որ քաղ. վարչութիւնը երկու ամիս է՝ չէ վճարել լուսաւորութեան կապալառուին կապալադրամը։ Աշուն է, շուտով կը սկսվեն անձրևները և մենք՝ այս անիծված քաղաքի թշուառ բնակիչներս պէտք է երեկոները և գիշերները մինչև մեր ծնկները խրվինք ցեխի մէջ ամենապաւ դէպքում։ Իսկ մեր քաղ. վարչութիւնը տարեկան մօտ 50,000 ր. քաղաքի բնակիչներից եկամուտ է ստանում։ Ի՞նչ է լինում, ուր է գնում այդ գումարը, երբ քաղաքի ամենատարրական կարիքը՝ փողոցների լուսաւորութիւնը չէ հոգացվում։ Ինչպէս անտարբեր են քաղաքի վարիչները, նոյնպէս անտարբեր են և նրա լիազօրները՝ ձայնաւորները։ Մեր քաղաքը գերազանցապէս եղել է միշտ և է թուրքական ասիական քաղաք։ Պիրօ

ԱՀԵՌԵԼԻ ՀՐԴԵՀ

Բաթում, 13 նոյեմբերի

Ամսիս 11-ի երբ. ժ. 7½-ին հրդեհ ծագեց Մ. Խաչատրեան և ընկ. առևտրական տանը պատկանող նաւթարկղի գործարանում։

Հրդեհը սկսվել է ատաղձի սղոցարանից, անցել մեքենաների բաժանմունքը և նոյն բաժանմունքի վիմաց դարսած տախտակի դէզերը։ Ենթադրում են, որ հրդեհը առաջ է եկել ատաղձի սղոցարանում, մեքենաների գլանակների շփումից, որոնցից առաջացել են կայծեր և թափվել տաշեղների վրա. այդ պատահել է դեռ աշխատանքի ժամանակ՝ ժամը 4-ին և չէ նկատվել մինչև ժամը 7½-ը։ Բարեբաղդաբար շուտ են վրա հասնում հրշեջների խմբերը, որոնք մինչև կէս. ժ. 1-ը կանգնեցնում են հրդեհը։ Պէտք էր տեսնել, թէ ինչպէս նոյն գործարանի բանւորները, մոռանալով ամեն վտանգ, նետվում էին ուղղակի կրակի բոցերի մէջ, որ մի կերպ կանգնեցնեն ահռելի հրդեհը։ Մինչև անգամ մի բանւոր ուղղակի իր կեանքի գնով ազատեց նաւթի և ապրանքի պահեստները։ Դէպքը պատահել է հետևեալ հանգամանքում. վառվում էր մեքենաների բաժանմունքը. պէտք էր շղթեկաթսայից բաց թողնել շղթին, որպէս զի տաքութիւնից շղթեկաթսան չը տրաքվի և միանգամայն չոչնչացնի ամեն ինչ. ահա այստեղ անձնազոհ բանւորը գլուխը փաթաթում է բրեզենով և նետվում կրակի բոցերի մէջ յիշեալ նպատակի համար. խեղճը մեծ դըժուարութեամբ բացում է շղթեկաթսան, որով և ազատում ամեն ինչ. նաւթի պահեստների մէջ եղել է՝ մէկի մէջ 40,000 պուդ նաւթ, միւսի՝ 60,000 պուդ, իսկ ապրանքի պահեստներում 200,000 ռուբլու պատրաստի ապրանք։ Յիշեալ ապրանքը ապահովագրած չէր, մօտ օրերս սպասում էին շոգենաւի, որ բեռնեն. բարեբաղդաբար կրակը չը հասաւ նաւթի և ապրանքների պահեստներին, թէ չէ՝ վնասը միլիօնների կը հասնէր. այդ էլ՝ շնորհիւ նոյն գործարանի եղբք բանւորների, որոնք դարձեալ իրանց մոռացած՝ կուում էին անդուլ կրակի դէմ հինգ ժամ անընդհատ, առանց յուսահատվելու, մինչև որ վերջապէս կանգնեցրին կրակը և հանգստացան։

Ամբողջ գործարանն ապահովագրված էր շատ փոքր գումարով, մինչև 150,000 ր., մի քանի ընկերութիւններում։ Ժողովուրդը կառքերով շտապում էր դէպի հրդեհավայրը. այս սոսկալի տեսարանը տեսնելով, բոլորի մտքով անցնում էր, որ կրակը կանցնի և միւս մասերը՝ նաւթի և ապրանքների պահեստները, կուցէ և ամբողջ գործարանը կրակի ճարակ դառնայ. բայց մի քանի ժամից յետոյ տեսարանը այլ կերպարանք ստացաւ. կրակը հանգելու վրա էր. արդէն մտածում էին վնասների քանակութեան մասին։ Դրանից յետոյ ժողովուրդը սկսեց հեռանալ քաշվել, հանդիստ սրտով, դէպի իրանց տները։

Վառվել է ամբողջ ատաղձի սղոցարանը, մեքենաների բաժանմունքը և սղոցարանի դիմաց դարսած տախտակի տան դէզերը...

Հաշի առնելով ապահովագրական ընկերութիւններից ստանալիք գումարները, դարձեալ ընկերութիւնը կը վնասվի մօտ 30,000 ր.։ Բոլոր ապահ. ընկ. գործակալները հեռագրել են իրանց ընկ. վարչութիւններին հրդեհի մասին և սպասում են տեսուչներին. այս քանի օրս կը պարզվի կրած վնասի ստոյգ քանակութիւնը։

Մի ուրախալի երևոյթ լսեցի այսօր. ընկերութիւնը ահագին պատուէրներ ունի և պէտք է շարունակի գործը. մինչև գործարանի շինութիւնները կարգի բերելը, մատչիր է ժամանակաւորապէս վարձել Ծովանանի գործարանը, որտեղ ամեն բան պատրաստ է, և իսկոյնեթ կարելի է աշխատանքի դիմել։ Բանւորների ուրախութեանը չափ ու սահման չը կայ. խեղճերը բոլորովին յուսահատվել էին. առաջը ձմեռ է գալիս, իրանք հաղիւ էին իրանց ընտանիքները պահում, իսկ այժմ պէտք է անգործ մնային։ Ի դէպ է ասել, որ յիշեալ գործարանում աշխատում են միմիայն հայ բանւորներ, որոնք շատ սրտանց կապված են այդ գործարանի հետ և որոնք ապացուցին, որ իսկապէս կեանքները տալու անգամ պատրաստ են, միայն թէ այդ իրանց սիրած գործարանը, ինչ պայմաններով էլ լինի, աշխատի և պատուով ապրեցնի այդ բազմաթիւ հայ ընտանիքները... ահա այդ երախտագէտ բանւորների հոգեբանութիւնը. մօտ 500 հայ բանւորներ ստանում են իրանց ապրուստը այդ գործարանից։ Ա. Նիկողոսեան

ԳԱՆԱՁԱՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Գանձակ, 11 նոյեմբերի

Նոյեմբերի 8-ին Գանձակի նահանգական դատարանի քրէական բաժանմունքում քննվեց քաղաքիս ս. Լուսաւորիչ եկեղեցու միաբան Եղնիկ քահ. Զիրքինեանցի և բա-

դացի գեղջկուհի Վարդանոյշ Ծերէթեանցի-Ջալլէթեանցի գործը, որոնք մեղադրվում էին կեղծիքի մէջ։

Դատարանի կազմը բաղկացած էր հեռաւել անձերից. նախագահ՝ դատարանի՝ անդամ Ի. Շ հպարտեան, հաշտարար դատաւորի օգնական Կրէմկովսկի և պատուաւոր հաշտարար դատաւոր բժշ. Գր. Տէր-Գրիգորեան, դատախազի օգնական Վասիլիևին և թարգ. Դաւ. Սարգսեան։

Գործի էութիւնը հետևեալն է։

1905 թ. հայ-թիւրքական կոտորածների ժամանակ Բաղա գիւղը կործանվում է թուրքերի ձեռքով, բնակիչները փախչում են զանազան վայրեր. ի միջի այլոց մանկահասակ Վարդանոյշ Սարգսեան Ծերէթեանցը իր ծնողների հետ պատսպարվում է Գանձակում, որտեղ մնում է տան ծառայութեան Աբրահամ Գէորգեանի մօտ. մի քանի ժամանակից յետոյ, Բարեկենդանի վերջին օրերում՝ Վարդանոյշին նշանադրում են Թիւրքիայից գաղթած Ալէքսանդր Մէլէթեանի հետ, որ հոմոսեքսուալ թղթեր չունենալու պատճառով վերցնում է իր հետ նշանածին և վերջինիս եղբօրը և գնում իր բնակութեան տեղը՝ Սօչիի շրջանի Դուբրու-Դայխա գիւղը և այնտեղ ամուսնանում Տրդատ քահ. Կարմիրեանի ձեռքով։ Զանցած շատ ժամանակ, տիկինը, տեսնելով որ իր ուսմունը իր երազած հարստութիւնը չունի, այլ մի աղքատ մարդ է եղել և օրական պարէնը ձեռք է բերում չոր հացի գնով, պատրաստվում է Գանձակ և կրկին մնում իր նախկին տիրոջ մօտ ծառայելու և մի քանի ժամանակից յետոյ, գրաւվելով Ախալքալաքի գաւառի Ղազլ-Քիլիսա գիւղացի Միքայէլ Յակոբեանից՝ վճռում է ինչ գնով էլ որ լինի անպատճառ ամուսնանալ վերջինիս հետ, որը և իրագործում է իր նպատակը՝ առաքփառաք ամուսնանալով նրա հետ 1909 թ. փետրվարի 5-ին։ Պսակողը լինում է վերոյիշեալ Եղնիկ քահ. Զիրքինեանը, որին հաղորդում է, որ ինքը ամուսնական կապերով դեռ ևս ոչ ոքի հետ չէ միացած (աւելորդ չեմ համարում ասել, որ Վարդանոյշը տէր-Եղնիկի ծուխ չէ եղել). նոյնպէս հաւատացնում են քահանային և Վարդանոյշի մերձաւորները, և տէր-Եղնիկը հաւատացած նրանց խօսքերին՝ յայտարարութեամբ դիմում է հոգևոր կառավարութեանը և ստանում հրաման և ապա պսակում որպէս օրիորդի։

Այդ օրից սկսա փոխվում են մեր Վարդանոյշի կենցաղավարութեան պայմանները. նրա ամուսնութեան օրերը յիշեալ Յակոբեանի հետ անցնում են քաղցր և զուարճալի՝ ունենալով և երկու զաւակ. բայց, ուստ, այդ բաղդաւորութիւնը երկար չէ տևում, և չար ատաղի տակ անսպասելի կերպով լոյս աշխարհ է գալիս նրա նախկին ամուսինը և սկսում դատ իր կնոջ դէմ, և հետևանքը այն է լինում, որ մեղադրեալների նստարանում բազմում են տէր-Եղնիկը և հերոսուհի Վարդանոյշ Ծերէթեան-Ջալլէթեանը։

Դատարանը լսելով ինչպէս վկաների ցուցմունքները, նոյնպէս և դատախազի պաշտպանների ճառերը՝ երկար խորհրդակցութիւնից յետոյ՝ վճռեց Եղնիկ ք. Զիրքինեանին կեղծիք կատարելուն համար (յայտարարութեան մէջ Վարդանոյշին օրիորդ ցոյց տալուն համար) զրկել բոլոր առանձին իրաւունքներից և քահանայական կոչումից և աքսորել Կալանաւորների ուղղէլ վայրը մի տարի ժամանակով, որը, համաձայն Բարձրագոյն Հրովարտակի, կրճատել մի-երրորդ դականով - 4 ամսով, իսկ Վարդանոյշ Ջալլէթեանին իրրև կնոջ՝ բանտարկութեան ենթարկել մի տարի ժամանակով։

Եղնիկ ք. Զիրքինեանը և Վարդանոյշ Ջալլէթեանը երաշխաւորութեամբ ազատ են։

Տէր-Եղնիկի դատապարտութիւնը տխուր տպաւորութիւն թողեց Գանձակում։ Նրան պաշտպանում էր երդուեալ-հաւատարմատարի օգնական Միք. Տէր-Ներսէսեանը։

Ի դէպ՝ աւելորդ չեմ համարում հրաւիրել բարձրագոյն հոգևոր իշխանութեան բարի ուշադրութիւնը, որ սոյնմանատիպ պատահարներից խուսափելու համար՝ ժամանակ է վերջապէս շրջաբերական հրամաններով սահմանել սոյնպիսի կարգուկանոններ, որ այլևս այդպիսի դէպքեր չը պատահեն։

Դաւ. ք. Թում.

Կարսի մեր թղթակիցը գրում է մեզ հետևեալը.

«Մշակի» № 77-ում գրել էի, որ մի հայ կին գիշերը կացնով սպանեց իր մարդուն։ Այժմ, նոյեմբերի 12-ին, նահանգական դատարանը վճռեց ոճրագործ կնոջը 12 տարի աքսոր»։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

✦ Երևանից հեռագրում են «Баку»-ին, որ խուզարկութիւնները և ձերբակալութիւնները քաղաքում դրամաշորթութիւնների առիթով շարունակվում են։ Ըստ երևոյթին, իշխանութիւնը այս անգամ լրջօրէն վճռել է երևան հանել յանցաւոր խմբին։ Խուզարկութեամբ զբաղված են ժանդարմները և Ալէքսանդրոպոլի ոստիկանութիւնը։ Թիֆլիսից մեկնել է այդ առիթով կարևոր գործերի քննիչը։ Ձերբակալված են 50 հոգի։

✦ Փոխարքան երկրորդ անգամ օրինագիծ է ուղարկել Պետերբուրգ Արմաւիրում քաղաքային ինքնավարութիւն մտցնելու մասին։

✦ Մենք ստացանք Իշխան Գ. Մ. Թումանովի «Характеристики и воспоминанія» («Բնորոշումներ և յիշողութիւններ») վերնագրով աշխատութեան առաջին գիրքը։ Այս աշխատութիւնը հրատարակվել է մի քանի տարի առաջ, այժմ լոյս է տեսնում երկրորդ հրատարակութեամբ և լրացրված ու պատկերազարդ։ Իր այդ աշխատութեամբ հեղինակը տուել է կովկասեան (ռուս, հայ, վրացի) գործիչների, ինչպէս օրինակ Ցարեւելիի, Գ. Արծրունու, Ա. Մատինեանի, Պ. Իզմայլեանի, Ա. Խաչանովի, Մ. Թամամշևի, Գ. Զանշիևի, Ալ. Քալանթարի և այլոց նկարագիրը և բնորոշումները։ Մենք դեռ ասելիք կունենանք խօսելու այս գրքի մասին։

✦ Այսօր, կովկասեան քաղաքների ներկայացուցիչների 2-րդ հանդիպարի անդամները ժ. 2 5 կը նայեն Ալէքսանդրեան հիւանդանոցը, դպրոցական շէնքերը, էլեքտրական կայանը և անկիանոցը։

✦ Վերջերս Թիֆլիսում սատկացել են հրդեհների դէպքերը, որոնք մեծ մասամբ առաջ են գալիս վառարանները ուժեղ վառելուց։

✦ Կովկասեան Հայոց Բար. Ընկերութեան խորհրդի նախագահը Ընկերութեան կողմից 17-ին նոյեմբերի ուղարկել է հետևեալ հեռագիրը Լօնդոնում մօտ ժամանակներս վախճանված անգլիական պարլամենտի անդամ և Հայաստանի յայտնի ճանապարհորդ Լինչի քրոջը.

«Թիւրքիայի բազմատանջ հայ ժողովրդի պաշտպանի և լաւագոյն հեղինակաւորը բարեկամի՝ մեծայարգ միստր Լինչի մահվամբ խորապէս զգացված լինելով, հոգով միանում ենք ձեր մեծ վշտին և խնդրում ենք ընդունել մեր անկեղծ ցաւակցութիւնը»։

✦ Քաղաքագլուխ Ալ. Խատիսեանի տակրութիւնը վերջին օրերս բաւական թուլացել է։ Քաղաքագլուխը անկողնից կենալ հաւանօրէն դեկտեմբերի առաջին օրերին։

✦ Իշխանուհի Դ. Մէլիքովան նուիրել է 100 ր. Անչիխատի եկեղեցում էլեքտրականութիւն անցկացնելու համար։

✦ Բագում նոյեմբ. 17 ին տեղի է ունեցել երկոյթ՝ նուիրված Սայաթ-Նովայի յիշատակին։

✦ Երևանում դրվել է տաղոյց գիմնազիայի նոր շինութեան հիմքը Աստաֆիևակայա մեծ փողոցում։

✦ Թիֆլիսի նահանգապետի կարգադրութեամբ ոստիկանութեան պատասխանները չը կատարելու համար ենթարկվում են տուգանքի Գէորգի Մաչէվարիանին 50 ր. և Ալի Ասկէր-օղլին 25 ռուբլի։

✦ Այսօր Բաքուի նահանգական դատարանում քննվում է Ծատուրեան եղբայրների գործը, որոնք մեղադրվում են 1912 թ. Բագում իրանց տան մէջ ռումբերի, հրացանների և պայթուցիկ նիւթերի պահեստ պահելուն մէջ։

✦ Նոյեմբ. 16-ին, Վարշավա քաղաքացի Վացլավ Գէրը, 34 տարեկան, կամենալով անձնասպանութիւն գործել, խմեց նաշադիրի թոյն։ Նրան տարան Արամեանի անուան հիւանդանոցը։ Կեանքին վտանգ չէ սպառնում։

✦ Շուշեցի Լեոն Ս. Քոչարեանի բնակարանից (Արսէնալի փող. № 7) գողացել են 26 ռուբլու արծաթէ ու ոսկէ և անային զանազան իրեր։ Կասկած յայտնված է այդ տանը կից կօշկակարի խանութ ունեցող թէլաւեցի Մարգիս Յովսէփեանի և Իվան Շինգազդիլովի վրա, որոնք, սակայն, իրանց մեղաւոր չեն ճանաչում։

✦ Կարսից մեզ գրում են նոյեմբ. 14-ից, որ այնտեղ եղանակները բաւականին տաք են գնում. ձիւն դեռ չէ տեղացել և սառնամանիք էլ չը կայ։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Արքունական Թատրոն

Երգչուհի Սարանդեվա իր Թովիչ ձայնով և ներշնչված խաղով՝ իւրաքանչիւր անգամ հանդէս գալուց՝ աւելի ու աւելի է զբաւում ունկնդիր հասարակութեան ուշադրութիւնը և վստահում նրա բուռն համակրանքը։ Պէտք է խոստովանել, որ տաղանդաւոր երգչուհու ձայնը ներկայ սեզօնին հնչում է աւելի ուժեղ և բիւրեղանման զուսված՝ քան անցեալ սեզօնին էր։

Կիրակի երեկոյեան՝ նոյեմբերի 17-ին, Սարանդեվա հանդէս եկաւ Վիօլետայի դերում «Տրավիատա» օպերայում։ Յիշեալ դերը երգչուհին ըստ սովորականին կատարեց շատ զգացված ու ջերմօրէն և խլեց հասարակութիւնից երկարատև ծափեր ու օվացիաներ։

Սարանդեվային անհամապատասխան խաղընկեր հանդիսացաւ Սարաջև՝ Ալֆրէդի դերում։ Երգչի ձայնը այդ երեկոյ հնչում էր ոչ պարզ, իսկ խաղը, որպէս սովոր ենք միշտ տեսնել, զուրկ էր ոգեորութիւնից, նոյն իսկ մինիմում զգացմունքից։

Ժերմոնի դերում Բօբրովի երգն ու խաղը մասամբ բաւարար կարելի էր համարել։ Երգչի բարիտոնային ձայնը բաւական ուժեղ է և դուրեկան, սակայն նկատելի են տեղ-տեղ անճարթութիւններ, մանաւանդ ելևէջների մասնակի։

Դիրիժեոր Զաք. Պալիևի անկարող էր լինում այդ երեկոյ շարունակաբար պահպանել պահանջվող ներդաշնակութիւնը բեմի և օրկէստրի միջև։ Այդ, խոստովանում ենք, պ. Զ. Պալիևի խոցը պակասաւոր կողմն է կազմում։

Ներկայացումից յետոյ տեղի ունեցաւ բալէտային դիվերտիսմէնտ՝ նոյն ծրագրով, որպիսին նախորդ մի քանի դիվերտիսմէնտներն էին։ Մինչ բալէտմէյստէր Վակրեցի ըկպերտուարը այնքան աղքատ է, որ մի քանի անգամ կատարված նոմէրները նորերով փոխարինելուց էլ զուրկ է։

Թատրոնը ամբողջապէս լիքն էր հասարակութեամբ։

Հ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Նոր-Առողջապահիկ» № № 10—11, 1913 թ.

«Նոր-Առողջապահիկի» ներկայ տարվայ № № 10—11-ը (մայիս-յունիս) բացառապէս նուիրված է մալարիային և դա շատ հասկանալի է, որովհետև մեր երկիրը, մանաւանդ Անդրկովկասը առաւելապէս տառապում է այդ հիւանդութիւնից։ Մենք խօսել ենք այդ հիւանդութեան մասին ընդարձակօրէն՝ թէ «Գիւղատնտեսում» և թէ «Առողջապահիկում», բայց մալարիան այնպիսի հիւանդութիւն է, որի մասին պէտք է խօսել անդադար, մանաւանդ մեր ժողովրդին, որը իր ագիտութեան պատճառով շատ է տուժում նրանից։ «Նոր-Առողջապահիկի» վերոյիշեալ համարում զետեղվել են շատ հետաքրքրական յօդուածներ մալարիայի մասին՝

1) Ի՞նչ է մալարիան — պրոֆ. Զելլի, յայտնի մալարիագէտ։

2) Դողը և յղութիւնը—բժ. Ա. Մկրտչեանի։

3) Մալարիա և մոծակներ—բժ. Մինասեանի (խմբագ.)։

4) Մալարիայի բուժարաններ և այլն։

Մի խօսքով՝ վերին աստիճանի հետաքրքրական յօդուածներ, որոնց հետ ծանօթանալը շատ կարևոր է՝ ոչ միայն հասարակ ժողովրդին, այլ և ինտելիգենտ դասակարգին, նամանաւանդ մեր գիւղական ուսուցիչներին, քահանաներին, մի խօսքով՝ այն բոլոր բանիմաց անձանց, որոնք գործում և ապրում են մեր գիւղական հասարակութեան շրջաններում։ Բերել այստեղ վերոյիշեալ յօդուածների բովանդակութիւնը աւելորդ համարելով, մենք միայն խորհուրդ կը տանք հայ կարդացող հասարակութեանը՝ ծանօթանալ այդ յօդուածների հետ և ըստ կարելւոյն օգտվել նրանց խորհուրդներից իրանց շրջավայրում. իսկ մեր ընկերակից բժ. Ե. Մինասեանին կը ցանկանք աւելի ևս եռանդ՝ հմախմբել իր շուրջը մեր հայ բժիշկներին, որոնցից շատերը՝ դժբաղդաբար՝ մայրենի լեզուն չիմանալու պատճառով չեն կարող մասնակցել վերոյիշեալ յոյժ կարևոր առողջապահական թերթին։ Մենք հաւատացած ենք, որ բժ. Մինասեանը եթէ այդ ուղղութեամբ առաջ տանէ իր թերթը, հանրամատչելի և անհրաժեշտ առողջապահական գիտելիք տարածելով հայ ժողովրդի մէջ, դա կը լինի այն ճանապարհը, որով թերթը կը ստանայ մեծ տարածում և կը դառնայ անհրաժեշտութիւն։ Ցանկանք աջողութիւն մեր միակ առողջապահական թերթին, որի կարևորութիւնը շատ մեծ է մեր ժողովրդի համար։

Մեզ մօտ՝ բոլորին յայտնի է, որ շատ դժուար է տանել հրատարակչական գործը, կամենում եմ ասել՝ որևիցէ թերթ հրատարակելը, եթէ չունես նիւթական միջոց, որովհետև մեր ժողովրդի 90%-ը անչրագէտ է, իսկ ինտելիգենտ մասը՝ ըստ մեծի մասին՝ մայրենի լեզուն չը գիտէ. ապա ուրեմն գովելի են մասնաւոր անհատների ջանքերը՝ գործել վերոյիշեալ պայմաններում, մանաւանդ մասնագիտական թերթ հրատարակել։

Մեզ մօտ առաջին առողջապահական թերթը հրատարակեց հանգուցեալ բժ. Տիգրան Նեանը, յետոյ բժ. Արծրունին, Տիգրան Նազարեանը, իսկ այժմ մնում է միակ թերթը բժ. Մինասեանի «Նոր-Առողջապահիկը» մեզ մօտ, Կ. Պոլսում՝ «Բժիշկը» բժ. Ղազարեանի։

Հասկանալի է, որ բոլորս ինչով կարելի է պիտի աջակցենք մեր ամեն տեսակ թերթերին, հանդէսներին թէ նիւթականապէս և թէ մտաւորապէս, որպէս զի մայրենի լեզուով ընթերցանութիւնը տարածված լինի մեր հասարակութեան մէջ. բայց մենք՝ բժիշկներս՝ պէտք է ի հարկէ աջակցենք և մեր միակ առողջապահական թերթին, որը իր մատչելի և լուրջ բովանդակութեամբ արժանի է ամեն տեսակ խրախուսանքի։

Բժ. Բ. Աղասարեանց

ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

---

1) «Կայծերը», դասագիրք հայ եկ.-ծխ. դպրոցների համար, կազմ. Թ. Խզմալեան և Գ. Միքայէլեան, Գ. և Դ. տարիներ, Ալէքսանդրոպոլ, 1913 թ.։ Գ. տարի՝ էջ 156, գ. 50 կ.։ Դ. տարի՝ էջ 192, գ. 70 կ.։ 2) «Հայ լեզու», ընտիր հատուածներ մայրենի լեզուի դասախրատկութեան համար. Ա. Փորսուղեանի, Ալէքսանդրոպոլ, 1913 թ., էջ 177, գ. 70 կ.։ 3) «Русск. Языкъ въ армянск. школахъ», Ա. Դաղբաշեանի, Թիֆլիս, 1913 թ., էջ 80, գ 40 կ.։ 4) «Ստեփանոս Նազարեանի երկերը», հատոր I, Թիֆլիս, 1913 թ., էջ 428, գ. 1 ր. 50 կ.։ 5) «Համազգային մեծ ոճրը», Թիֆլիս, 1913 թ., էջ 16։ 6) «Великій праздникъ армянской культуры», Меликсетъ-Бекова, Одесса, 1913 г., ст. 14, цѣна 15 к. 7) «Քանոնիզամեակ Պատիգօրսկի հայոց եկ.-ծխ. երկսեռ դպրոցի», Պատիգօրսկ, 1913 թ., էջ 79, գ. 50 կ.։ 8) «Գիտութիւնը և յեղափոխութիւնը», Էրնէստ Իւնթէրմանի, թարգ. Զէյթունցեանի, Կ. Պոլիս, 1913 թ., էջ 152, գ. 5 ղրշ.։ 9) «Պողոս փաշա Նուպար», Երուանդ Օտեանի, Կ. Պոլիս, 1913 թ., էջ 100, գ. 4 ղրշ.։ 10) «Մի գաղթէջ», Մկրտիչ Փորթուգալեանի, Մարսէյլ, 1913 թ., էջ 33, գ. 20 սանտիմ։

ՄԱՄՈՒԼ

Ս. Զաւարեանի մահվան տխուր ու յուզիչ պարագաները այնքան ճնշող տպաւորութիւն են թողել հասարակութեան վրա, որ ամեն մի փորձ՝ արդարացնել նրա հանդէպ գործված վարմունքը՝ պէտք է բնաւ տեղի չունենար։ Ոչ ոք չէ ուրանում և ամենքը, նոյնիսկ Ս. Զաւարեանի կուսակիցները և կուսակցական թերթերը խոստովանում են, որ ամօթալի փաստը տեղի է ունեցել, որ նա, Զաւարեանը, լքված է եղել ամենքի կողմից և ամենից առաջ իր կուսակցական ընկերների կողմից, և նրան չեն օգնել ոչ այն կուսակցութիւնը, որին նա պատկանում էր, ոչ իր մօտ ընկերները, ոչ ևս գաղափարական հակառակորդները։

Եւ «Մշակը», որ մերկացրեց այդ ամօթալի վարմունքը, դրեց խնդիրն ընդհանուր հողի վրա և դատապարտեց ընդհանուրի վարմունքը, որ արատ է բերում հայ ինտելիգենցիային։ Բայց գանվեցին մամուլի օրգաններ, որոնք այդտեղ ևս սկսեցին պոչ խաղացնել և աշխատել մեղը ձգել, ինչպէս ասում են, «съ больной головы на здоровую».

Ամենից առաջ՝ «Հօրիզոնը» կամեցաւ արդարացնել Դաշնակցութիւն կուսակցութիւնը, ասելով թէ հանգուցեալն ինքը վճռականապէս մերժում էր որևէ նպաստ ստանալ կուսակցութիւնից։ Մենք չենք կամենում վիճել այդ հարցի ճշդութեան մասին, բայց եթէ այդ փաստը նոյնիսկ ճիշդ լինի, դարձեալ նա չէ արդարացնում կուսակցութիւնը, որովհետև նա, յամենայն դէպս, կարող էր մասնաւոր կերպով աշխատել ապրուստի միջոցներ հայթայթել Զաւարեանին, ինչպէս կարողանում էր հայթայթել Խաժակին, Զարդարեանին և այլոց։ Հետևաբար, պէտք է ընդունել իբրև անհերքելի, անուրանալի ճշմարտութիւն, որ ամօթալի դէպքի մէջ ամենից առաջ և ամենից շատ մեղաւոր են կուսակցութիւնը և կուսակցական ընկերները։ Պէտք է քաջութիւն ունենալ այդ խոստովանելու։

Բայց «Կովկասի Լրաբեր» և «Բաքուի Ձայն» թերթերը բոլորովին հակառակ կերպով վարվեցին։ Առաջինը իր «Սովի ուրուականը» յօդուածի մէջ դատապարտութեան ոչ մի խօսք չուղղելով կուսակցութեան, և կուսակցական ընկերներին յարձակվեց Միացեալ Ընկերութեան վրա և «զզուելի», «վայրենի», «Տիկնադարեան ֆանատիզմ» խօսքերով որակեց նրա վարմունքը։ Երկրորդը աւելի առաջ գնաց. նա (№ 142) աշխատում է արդարացնել նոյն իսկ կուսակցական ընկերների վարմունքը, համարելով այդ անձնական խղճմտանքի գործ, և իբ զարոյթի, յարձակման ամբողջ սլաքները թափում է Միացեալ Ընկերութեան վրա, որի վարմունքը համարում է բարբարոսական։

Անբարեխղճութեան («Կովկասի Լրաբեր») և գծած թայֆայական ֆանատիկոսութեան («Բաքուի Ձայն») մէջ դրանից աւելի առաջ գնալ անկարելի է։ Եւ պէտք է խորապէս ցաւել, որ կարող են հանել բարոյական այնպիսի անկման, որին գուցէ չեն հասել և սև-հարիւրեակային ռուսական թերթերը։

Եւ, ճշմարիտ, որ փոքր ի շատէ և ամենասարբական արդարութեան զգացումն ունեցող անձը կարող է ասել, թէ Ս. Զաւարեանի սովամահ լինելու աղէտի մէջ մեղաւոր են ոչ թէ նրա կուսակցական ընկերները, բարեկամները, որոնք լքել են նրան և նոյնիսկ աշխատել խոչընդոտներ յարուցանել նրա դէմ, այլ նրա հակառակորդները, որոնք նոյնպէս լքել են նրան։

Ընդհակառակը, ամեն մի երեխայ անգամ կը վկայէ, որ եթէ Ս. Զաւարեանի գաղափարական հակառակորդները չեն աշխատել նրա համար պաշտօն և ապրուստ ճարել, դա դեռ հասկանալի է, դա դեռ այնքան դատապարտելի չէ. բայց անհասկանալի, դատապարտելի և զզուելի է, երբ նրա ընկերները վարվել են նոյն ձևով։ Հակառակը պնդել՝ կը նշանակէ դիտմամբ կուրացած ձևանալ և անբարեխիղճ լինել։

Գալով Միացեալ Ընկերութեան, հարկ կա՞յ ասելու, որ յարձակումները նրա դէմ միանգամայն անտեղի են և անարդար։ Միացեալ Ընկերութիւնը ունի որոշ կանոնադրութիւն, որի մէջ մի յօդուած պարտաւորեցնում է նրան պաշտօնի մէջ չընդունել յեղափոխական կուսակցութեան պատկանող և օտարազգաց անձանց։ Այդ յօդուածը մտցված է, անկասկած, տեղիք չը տալու թիւրքական կառավարութեան կողմից որևէ կասկածամտութեան և հալածանքի։ Եթէ Ընկերութիւնը կատարել է իր կանոնադրութեան այդ պահանջը և ինքն Ս. Զաւարեանն ևս համոզվել է, որ նա իրաւունք ունի այդպէս վարվելու, մնում է կարելի է նրան աւելի մեղաւոր համարել, քան այն ընկերներին և այն կուսակցութիւնը, որոնց անմիջական և բարոյական պարտականութիւնն էր օգնել իրանց ընկերին և կուսակցութեան անդամին։

Ցաւում ենք, որ ակամայ խզեցինք մեր լռութիւնը, ցոյց տալու համար յիշեալ երկու օրգանների ակնայայտնի աչառու և անբարեխիղճ վերաբերմունքը։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Տարազիր հաղորդութիւններին

Հաղբատ, 27 հոկտ.

Օտարաբնակ հայրենակիցներ, ձեզ արդէն յայտնի է, որ Հաղբատում հիմք է դրված մի փառաւոր դպրոցական շէնքի, որը պէտք է աւարտվի ձեր ազակցութեամբ։

Այժմ արդէն այդ շինութեան հիմքը վերջացած է համարեա և պատերը գետնի երես են հանված։ Շինութեան յանձնաժողովը որոշել է ոչ մի գժուարութեան առաջ կանգ չառնել և ձմեռվայ ընթացքում պատրաստել բոլոր նիւթերը, որպէսզի եղանակը բացվելուն պէս շարունակվեն աշխատանքները և ամենամօտ ապագայում վերջանայ գործը։ Շտապեցէք ուրեմն ձեզ մօտ եղած նուէրները հացնել յանձնաժողովիս, որպէսզի կարող լինենք անարգել առաջ տանել գործը։

Նախագահ շինութեան յանձնաժողովի՝
Ստ. Ստեփանեան

Անդամ-քարտուղար՝
Ս. Տէր-Գասպարեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՑԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐՔԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ

Կ. Պոլսից հեռագրում են մայրաքաղաքների լրագիրներին.

Այժմ պարզվում է, որ Գերմանիայի և Թիւրքիայի մէջև գերմանացի հրահանգիչների առիթով բանակցութիւնները վաղուց են սկսված։

Մեծ պատութիւնների այդ մասին ուղղած հարցերին Գերմանիան տալիս էր խուսափողական պատասխաններ, թէ առայժմ ոչինչ վճռված չէ։

Այդպիսով այն տեղեկութիւնը, թէ Թիւրքիա են մեկնում 42 գերմանացի զինուորական հրահանգիչներ, երբեակ համաձայնութեան համար երկաց միանգամայն անպատեալի։ Գերմանացի հրահանգիչների Թիւրքիա ուղարկվելու հարցը կազմում էր ռուս-գերմանական գաղտնի բանակցութիւնների առարկան։

Կոչվեցվը Բերլինում գտնված ժամանակ յայտնեց գերմանական կառավարութեանը, որ, Ռուսաստանի կարծիքով, Կ. Պոլսի զօրքերի հրամանատարութիւնը գերմանացու յանձնելը բոլորովին թոյլատրելի չէ։

Գերմանական կառավարութիւնը դրան պատասխանեց, որ Գերմանիան ի նկատի կունենայ Ռուսաստանի բծախնդրութիւնը այդ հարցում և այդ պատճառով հրահանգիչների պարապելու գեներալ Սանտէրը կարող է ստանձնել օրինակ Էրզրումի կամ Ադրիանուպոլսի զօրաբանակի հրամանատարութիւնը։

Հէնց դրա վրա էլ Բերլինի բանակցութիւնները կանգ առան։

Այժմ ճշգրիտ տեղեկութիւններ կան, որ գերմանական կառավարութիւնը իրաւեղէ է արել Ռուսաստանին այն մասին, որ գեներալ Սանտէրը ստանձնում է Կ. Պոլսի զօրաբանակի հրամանատարի պաշտօնը։

Երբեակ համաձայնութեան դիտանագէտները կարծում են, որ Գերմանիայի այդ վճիռը դեռ վերջնական չէ և յանուն ռուս-գերմանական բարի յարաբերութիւնների կը վերացվի։

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԿԵԱՆՔԻՆ

Ուստր, 31 հոկտ.

Հայ գրերու գիւտի և հայ տպագրութեան հմարդային մեծ տօնին օրը, որ նշանակուած էր հոկտ. 13/26-ին, տեղւոյս ս. Փրկիչ եկեղեցւոյն մէջ տեղի ունեցաւ մասնաւոր պաշտամունք և հոգեհանգիստ, Սահակ-Մեսրոպի յիշատակին երկսեռ խուռն բազմութեան մը ներկայութեամբ։

Օրուան պատարագիչն էր Մուշեղ արքեպիսկոպոս Սերոբեան, որ յատկապէս հրաւիրուած էր հայութեան յիշատակի այդ տօնին օրը կատարելիք եկեղեցական արարողութեանց նախագահելու և քարոզելու։ Նորին սրբազնութիւնը՝ իր քարոզին բնաբան առնելով «Հայ գրերու գիւտը Սահակ-Մեսրոպի ձեռամբ» նիւթը՝ մէկ ժամ տեղ հիանալի բանախօսութեամբ մը վերլուծեց 1500 տարի առաջուան մեր ազգային եկեղեցական կեանքը և պարզեց Սահակ-Մեսրոպի կատարած հայրենասիրական այն վեհ ու օգտակար ծառայութիւնը, որ հայ գրերու գիւտով ազգին կեանքը յաւերժացուցին և հայ եկեղեցին կորուստէ փրկեցին։ Մուշեղ սրբազան քարոզի վերջաբանին մէջ շեշտեց պէտքը հայ լեզուն ու հայ դպրութիւնը ժողովրդի ամեն խաւերուն ծանօթացնելու և ընդհանրացնելու, ըսելով թէ՝ Սահակ-Մեսրոպ հայ գրերու գիւտն ըրին, որպէսզի անիկա ժողովրդի ընդհանուրին սեփականութիւն դառնայ, որով կարենան պահել իրենց ազգութիւնն ու հայ եկեղեցին։ Փափագ յայտնեց միանգամայն, որ հայ եկեղեցին ժողովրդեան հասկնալի լեզուով աւելի է նրան աւելի մեղաւոր համարել, քան այն ընկերներին և այն կուսակցութիւնը, որոնց անմիջական և բարոյական պարտականութիւնն էր օգնել իրանց ընկերին և կուսակցութեան անդամին։

Ցաւում ենք, որ ակամայ խզեցինք մեր լռութիւնը, ցոյց տալու համար յիշեալ երկու օրգանների ակնայայտնի աչառու և անբարեխիղճ վերաբերմունքը։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Տարազիր հաղորդութիւններին

Հաղբատ, 27 հոկտ.

Օտարաբնակ հայրենակիցներ, ձեզ արդէն յայտնի է, որ Հաղբատում հիմք է դրված մի փառաւոր դպրոցական շէնքի, որը պէտք է աւարտվի ձեր ազակցութեամբ։

Այժմ արդէն այդ շինութեան հիմքը վերջացած է համարեա և պատերը գետնի երես են հանված։ Շինութեան յանձնաժողովը որոշել է ոչ մի գժուարութեան առաջ կանգ չառնել և ձմեռվայ ընթացքում պատրաստել բոլոր նիւթերը, որպէսզի եղանակը բացվելուն պէս շարունակվեն աշխատանքները և ամենամօտ ապագայում վերջանայ գործը։ Շտապեցէք ուրեմն ձեզ մօտ եղած նուէրները հացնել յանձնաժողովիս, որպէսզի կարող լինենք անարգել առաջ տանել գործը։

Նախագահ շինութեան յանձնաժողովի՝
Ստ. Ստեփանեան

Անդամ-քարտուղար՝
Ս. Տէր-Գասպարեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՑԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐՔԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ

Կ. Պոլսից հեռագրում են մայրաքաղաքների լրագիրներին.

Այժմ պարզվում է, որ Գերմանիայի և Թիւրքիայի մէջև գերմանացի հրահանգիչների առիթով բանակցութիւնները վաղուց են սկսված։

Մեծ պատութիւնների այդ մասին ուղղած հարցերին Գերմանիան տալիս էր խուսափողական պատասխաններ, թէ առայժմ ոչինչ վճռված չէ։

Այդպիսով այն տեղեկութիւնը, թէ Թիւրքիա են մեկնում 42 գերմանացի զինուորական հրահանգիչներ, երբեակ համաձայնութեան համար երկաց միանգամայն անպատեալի։ Գերմանացի հրահանգիչների Թիւրքիա ուղարկվելու հարցը կազմում էր ռուս-գերմանական գաղտնի բանակցութիւնների առարկան։

Կոչվեցվը Բերլինում գտնված ժամանակ յայտնեց գերմանական կառավարութեանը, որ, Ռուսաստանի կարծիքով, Կ. Պոլսի զօրքերի հրամանատարութիւնը գերմանացու յանձնելը բոլորովին թոյլատրելի չէ։

Գերմանական կառավարութիւնը դրան պատասխանեց, որ Գերմանիան ի նկատի կունենայ Ռուսաստանի բծախնդրութիւնը այդ հարցում և այդ պատճառով հրահանգիչների պարապելու գեներալ Սանտէրը կարող է ստանձնել օրինակ Էրզրումի կամ Ադրիանուպոլսի զօրաբանակի հրամանատարութիւնը։

Հէնց դրա վրա էլ Բերլինի բանակցութիւնները կանգ առան։

Այժմ ճշգրիտ տեղեկութիւններ կան, որ գերմանական կառավարութիւնը իրաւեղէ է արել Ռուսաստանին այն մասին, որ գեներալ Սանտէրը ստանձնում է Կ. Պոլսի զօրաբանակի հրամանատարի պաշտօնը։

Երբեակ համաձայնութեան դիտանագէտները կարծում են, որ Գերմանիայի այդ վճիռը դեռ վերջնական չէ և յանուն ռուս-գերմանական բարի յարաբերութիւնների կը վերացվի։

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԿԵԱՆՔԻՆ

Ուստր, 31 հոկտ.

Հայ գրերու գիւտի և հայ տպագրութեան հմարդային մեծ տօնին օրը, որ նշանակուած էր հոկտ. 13/26-ին, տեղւոյս ս. Փրկիչ եկեղեցւոյն մէջ տեղի ունեցաւ մասնաւոր պաշտամունք և հոգեհանգիստ, Սահակ-Մեսրոպի յիշատակին երկսեռ խուռն բազմութեան մը ներկայութեամբ։

Օրուան պատարագիչն էր Մուշեղ արքեպիսկոպոս Սերոբեան, որ յատկապէս հրաւիրուած էր հայութեան յիշատակի այդ տօնին օրը կատարելիք եկեղեցական արարողութեանց նախագահելու և քարոզելու։ Նորին սրբազնութիւնը՝ իր քարոզին բնաբան առնելով «Հայ գրերու գիւտը Սահակ-Մեսրոպի ձեռամբ» նիւթը՝ մէկ ժամ տեղ հիանալի բանախօսութեամբ մը վերլուծեց 1500 տարի առաջուան մեր ազգային եկեղեցական կեանքը և պարզեց Սահակ-Մեսրոպի կատարած հայրենասիրական այն վեհ ու օգտակար ծառայութիւնը, որ հայ գրերու գիւտով ազգին կեանքը յաւերժացուցին և հայ եկեղեցին

կատարէ կրօնական արարողութիւններուն մեծագոյն մասը, եթէ կարելի է։

*
* *

Ամերիկահայոց ազգային կենտրոնական վարչութիւնը ամսոյ 23-ին համազգային յօբելեանի առիթով շնորհաւորական հեռագիր ուղարկեց Էջմիածին Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսին և իր կողմանէ յօբելեանին ներկայ գտնուելու համար ներկայացուցիչներ նշանակեց Կարապետ եպիսկոպոսին, Ա. Քալանթարին և Հ. Առաքելեանին։

Պէտք է խոստովանիլ թէ՝ ամերիկահայը իր դիրքին արժանի գործունէութիւն ցոյց չտուաւ համազգային յօբելեանի խնդրոյն մէջ, այլևայլ պատճառներու։ Քանի մը զաղութներու կողմէ միայն հանդէսներ տեղի ունեցան, իսկ զղջոցական ֆոնդի համար տակաւին ոեէ պաշտօնական հանգանակութեան ձեռնարկուած չէ։ Թերևս մօտ ապագային ատոր ալ ձեռնարկուի։

*
* *

Ամսոյ 26-ի կիրակի երեկոյեան հանդէս մը տեղի ունեցաւ ի նպաստ «Armenia» անգլիերէն ամսաթերթին, որ կը հրատարակուի Նիւ-Եօրկի մէջ Արշակ Տ. Մահտեսեանի ձեռամբ։ Հանդէսին ատենախօսեցին Արշակ Տ. Մահտեսեան, Ռուբէն Հէրեան և դօքթ. Փ. Ադամեան, որոնք շեշտելով օգտակարութիւնը այսպիսի ամսաթերթի մէջ՝ հրաւիրեցին ներկաները բաժանորդագրուելու, թերթին հրատարակութիւնը ապահովելու համար։

Հանդէսին ատենապետ Մ. Գ. Պէրպէրեան իր կողմէ 5 օրինակ «Armenia» այլևայլ կարևոր հաստատութիւններու և ամերիկացի յայտնի անձնաւորութիւններու նուէր ընելով՝ կոչ ըրաւ ներկաներուն, որ իր օրինակին հետևին, թերթին հրատարակութեան բեռը խմբագրին ուսերուն վրայ չծանրացնելու համար։ Ամերիկահայոց նորընտիր առաջնորդ Աբսէն ծ. վարդապետ Վեհունին 3 օրինակ բաժանորդագրուեցաւ, ուրիշներ ևս հետևեցան այս օրինակին և նոյն իրիկունը կարելի եղաւ «Armenia»-ին գրեթէ քառասուն նոր բաժանորդներ գրանել։

«Armenia»-ի խմբագիր Արշակ Տ. Մահտեսեան վերջին երեք տարուան մէջ մօտաւորապէս 1500 դալէր կորուստ ունեցած է թերթի հրատարակութեան համար, զոհողութիւն մը, որ անհամեմատօրէն մեծ է իր ոյժին ու իր սեփական միջոցներուն։

Ամերիկահայ հասարակութեան համար ու մանաւորապէս Նիւ-Եօրկի մեր հայ հարուստ վաճառականներուն համար ամօթ մը պիտի ըլլար, եթէ ձգէին որ «Armenia»-ի խմբագիրը իր ոյժերը սպառած տեսնէր ու թերթին հրատարակութիւնը դադրեցնէր։ «Armenia»-ի պէս թերթ մը շատ կարևոր դեր ունի կատարելիք այս գաղթականութեան մէջ։ Հայ հարուստները ժամանակ է որ շարժին ու ստեղծեն միջոցներ, որպէսզի «Armenia»-ն կարենայ իր դերը պատուաւոր կերպով կատարել։

Մաղաք Գ. Պէրպէրեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

— Միլիկովը մեկնել է Պարիզ հայկական հարցի վերաժողովին մասնակցելու համար։

— Կ. Պոլսից հեռագրում են, որ Թիւրքաց կառավարութեան կարգադրութեամբ փակվեց «Դաշնակցութիւն» կուսակցութեան օրգան «Ազատամարտ» թերթը և կալանաւորվել է Բուլանդկի առաջնորդը։

— Այս օրերս Կ. Պոլսում «Կոնստանդին» նաւի վրա, այն բռնեցին՝ երբ ռուսաց դեսպան Գիրսը հրաժեշտ էր տալիս ամերիկեան դեսպանին, Թիւրքաց իշխանութիւնները, առանց վաղօրք զեկուցանելու, կալանաւորեցին նաւի վրա ոմն Մուստաֆայի, որ յետոյ երևաց, թէ Մահմուդ-Շեվքէթ փաշային սպանողն է և դատապարտված է մահվան պատժի։ Ռուսաց կառավարութիւնը սաստիկ բողոքել է Բ. Դրան այդօրինակ ինքնագլուխ և յանդուգն վարմունքի դէմ։

— Թիւրքիան խոստացաւ ազատել ռուսական նաւի վրա կալանաւորված Մուստաֆային։ Մեծ վէգիրը ներողութիւն խնդրեց Կ. Պոլսի ռուսաց դեսպանից։

— Թիւրքաց կառավարութիւնը որոշեց յանձնել Մահմուդ-Շեվքէթ փաշային սպանող Մուստաֆային ռուսաց կառավարութեան ձեռքը միայն նրանից յետոյ, երբ Կ. Պոլսի ռուսաց դեսպան Գիրսը ապառնայ իր կարգադրութեամբ, թէ կարող է ծովային ցոյց լինել Բոսֆորի ջրերում։

— Մահմուդ-Շեվքէթ-փաշային սպանողներից մինը Օդեսայում թիւրքաց հիւպատոսին խոստովանել է, որ սպանութիւնից յետոյ մարդասպանները ապաւինեցին ռուսական շրջանակում։

— Աւստրիան խոստացաւ Բոլգարիային պաշտպանել դինաստիան և ղեկավարել բոլգարական ներքին և արտաքին քաղաքականութիւնը։ Դրա փոխարէն՝ Բոլգարիան Վիէննայի հետ համաձայնութիւն կապեց, որով նա դառնում է Աւստրիայի զինուորական դաշնակիցը Բալկաններում։

— Ադրիանուպոլսում հրդեհը ոչընչացրեց 200 տուն։

— Պետերբուրգում ստացված տեղեկութիւնների համաձայն, չէ աջողվել Բոլգարիային կնքել զինուորական պայմանագիր Աւստրիայի հետ։ Մինիստր Գէնենադիէվը այժմ ուղևորվում է Պետերբուրգ։

— Բ. Դրան կարգադրութեամբ Թրակիայից արտաքսված են բոլոր բոլգարները։

— Գերմանիան և Ռուսաստանը պայմանաւորվել են չը խոռնվել բնաւ բոլգարական գործերին։

— Խարբինից հեռագրում են, որ Զինաստանի հարաւում բռնկվել է յեղափոխութիւն։ Շանխայից ուղարկված է մեծ զօրամաս։ Ընդհանուր դրութիւնը չափազանց յուզալի է։

— Եապոնիան Մէկսիկային առաջարկել է նիւթական օգնութիւն Ամերիկայի դէմ։

— Լոնդոնի և շվեյցարական Բազել ու Ժընէվ քաղաքների միջև հաստատվում է հեռախօս։

— «Հ. Բ.»-ի թղթակիցը հեռագրում է, որ չը նայած կրած մի շարք չարչարանքներին և երկարատև բանտարկութեան, նախկին սուլթան Արդիւլ-Համիդը դեռ առոյգ է ու առողջ և չափազանց հետաքրքրվում է քաղաքական դէպքերի ընդհանուր ընթացքով։

— «Բ. Բ.»-ին հեռագրում են Հռոմից, որ պապը սաստիկ հիւանդ է։ Ամեն րոպէ սպասվում է նրա վախճանը։

— Ֆրանսիացի յայտնի ժուրնալիստ Դէրուլէդը ծանր հիւանդ է։

— Լոնդոնում, Բերլինում և Վիէննայում լրագիրների մէջ բողոքներ են տպվում ռուսական բանտերում տիրող բէժիմի դէմ։ Բողոքների տակ ստորագրում են պալատի պատգամաւորներ և զանազան յայտնի ուսումնականներ։

— Մոսկվայի քաղաքագլուխ նշանակված է Պետական Դումայի անդամ Շուբինսկին, որ Պլեվէի մինիստրութեան մէջ վարում էր դեպարտամենտի վերատեսչի պաշտօն։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏ. ՀԵՌ. ԳՈՐԾ.)

16 Նոյեմբերի

ՈՒՐԱԼՍԿ։ Նոյեմբերի 14-ին հիւանդացան ժամանակաւոր 27, մեռան 24 մարդ. մնում են հիւանդ 35 հոգի։

ՑԱՐԵՐՆ։ Նորից եղան անկարգութիւններ։ Կատարվեցին շատ ձերբակալութիւններ։ Կառավարութիւնը Բերլինից կարգադրել է կատարել խիստ քննութիւն։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Երկրագործութեան գլխաւոր վարչութիւնը նախագծել է երկրորդ հերթին բարձր գիւղատնտեսական հաստատութիւններ բանալ Հիւսիս-Արևմտեան երկրի քաղաքներից մէկում, Կովկասում, Տաշկենտում և Բեսարաբիայում։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ։ Մարիեվի հանքերում 6 զինված մարդ գրասենեակից յափշտակել են 10,000 ր., սպանելով պահակին և հաշուապահին։

ՍԱՐԱԳՕՍՍԱ։ Ուսանողները քարեր նետեցին ոստիկանութեան վրա, որ ստիպված եղաւ զէնք մերկացնել։ Ուսանողները որոշեցին դասադուլ անել։

17 Նոյեմբերի

Կ. ՊՕԼԻՍ։ Հանդիսաւոր կերպով Բոսֆորով անցաւ ռուսաց նաւատորմիղի ընկերութեան նոր «Մեծն Պետրոս» շոգենաւը, որի վրա յետոյ կայացաւ խնճոյք։ Ճառեցին դեսպան Գիրսը և ընկերութեան ներկայացուցիչը։

ՏԱՇԿԵՆՏ։ Բուխարա անցաւ էմիրը։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ։ Ծովային փոթորիկ է։ Նաւատորմիղը կանգ է առել։ Մի քանի նաւեր խորտակվել են մարդկային կորուստներով։

ՈՒՐԱԼՍԿ։ Սկզբից մինչև նոյեմբերի 15-ը ժամանակաւով հիւանդացան 307, մեռան 272 հոգի։

ԲԵԼԳՐԱԴ։ Աւստրօ-ունգարական դեսպանը թագաւորին յանձնեց իր հաւատարմագրերը և ստացաւ Սաւվայի շքանշանի մեծ խաչը պարգև։

ԲԵՐԼԻՆ։ Պաշտօնապէս հաղորդվում է, որ Ցարէբնի դէպքերի առիթով ֆրանսիական կառավարութիւնը պաշտօնական քայլեր չէ արել։

Զինուորական մինիստրը մեկնեց Դօնաուեշնգէն կայսրին զեկուցանելու այդ դէպքերի մասին։

ԵԱԼՏԱ։ Մեկնեց մօնգոլական դեսպանութիւնը։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Օդօլը ակնաւոր գիտնականների միահամուռ կարծիքով, ներկայանում է իբրև տաքսների ողողիչ, որը ներկայումս աւելի կատարելապէս համապատասխանում է տատասների առողջապահական պահանջներին։

ՍՊԷՐՄԻՆ

ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻՆ միակ իսկական սպէրմինն է, որը բաղմապիսի կերպով փորձված է և՝ շնորհիւ հատած փայլուն հետևանքներին՝ առաջադրվում է աշխարհիս բոլոր յայտնի գիտնականների կողմից։ Եէվրասէնիայի, սեռական բուլութեան, զառամութեան, իսէրիկայի, Եէվրայգիայի, սակաւարիւնութեան, թոխաների, սիֆիլիսի, անդիկային բժշկութեան հեռեւանիւնների, սուտի հիւանդութիւնների (չաղութեան, սրտի պնդատութեան, սրտի բարախման, պէրէքոյի, միօկարդիտի), զարկերակի կարծրացման, ալկոհոլիզմի, ողնուծարի հիւանդութեան, կաթուածների, հիւանդութիւններից առաջացած յոգնածութեան և այլ հիւանդութիւնների ժամանակ։ Առանձնապէս ուշադրութիւն պիտի դարձնել բասված մահլամ ներից, որոնք թէ յատկութեամբ և թէ ներգործութեամբ Սպէրմին-Պէլի հետ ոչ մի առնչութիւն չունին և յաճախ պարունակում են առողջութեան համար վնասակար տարրեր։ Դրականութիւնն ուղարկվում է ձրի։ Սպէրմին-Պէլը կարող էք գտնել ամենուրեք։

ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ

ՊՐՕՖԵՍՕՐ ԴՕԿՏՕՐ ՊԷԼ և ՈՐԴԻՔ։ ՍՊԲ.
ՄԱՏԱԿԱՐԱՐ ՆՈՐԻՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՄԵԾ. ԴՐԱՆ.

ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

(П.111297) 12—8

ГОЛОВНУЮ БОЛЬ и МИГРЕНЬ
РАДИКАЛЬНО УСТРАНЯЕТЪ
„МИГРЕНОНЕРВОЗИНЪ"
БЕЗУСЛОВНО ВѢРНОЕ БЕЗВРЕДНОЕ РАСТИТЕЛЬНОЕ СРЕДСТВО.
ТРЕБОВАТЬ въ АПТЕКАХЪ и АПТ. МАГАЗ.
ТОЛЬКО НАСТОЯЩИХЪ ПОРОШКОВЪ съ ПЫТУХОМЪ Аптъ. А. ГОНСЕЦКАГО въ Г. ПЛОЦКѢ по 10 коп. за шт.
ОСТЕРЕГАЙТЕСЬ ПОДДѢЛОКЪ! ФАБР. МАРКА
(В. 54178) 39—12

ԳԵՏՆԱԽՆԶՈՐ

ստացված է Կիսլովոդսկից մեծ քանակութեամբ (վարդագոյն ընտիր տեսակից) և ծախվում է ամենամատչելի գնով։ Հացէն՝ Զերքեզովկայա (նախկին Աւճալսկայա) փողոց № 43.

Կ. ՍՏԵՓԱՆԵԱՆՑ

(ա. օ.) 1050. 3 2

ՀԱԶԻԱԳԻՒՏ ԴԷՊՔ

ԿԸ ՀՄԱՑՎԷՔ

տեսնելով մեր առարկաները և կը զարմանաք՝ թէ որքան էժան գներ ենք նշանակել, երբ համոզվէք մեր ապրանքի լաւ յատկութեան մէջ։

ՄԻԱՑՆ 4 Ր. 95 ԿՕՊԵԿՈՎ, ուղարկում ենք արժէք. և օգտ. առարկաների հետևեալ գարնիտուրը. 1) բրանի գեղ. ժամացոյց, մօգալին, սև պղպատից, **շատ ճարտար**, լարումը կրթից՝ 40 ժամը մի անգամ, անկէր. իսկ. ընթացքով. քարերով, կամ թէ կանացի ցիլինդր. ժամաց., մինչև բոպէները ստուգված **անպայման ուղիղ ընթացքով**, 6 տարվայ երաշխաւորութեամբ։ 2) Մօդային շքեղ շղթայ՝ երկշարք. «Դուրէ» իսկ. մետալից, էլեկտրա ձևի։ 3) Շատ հետաքրքր. բրելոկ։ 4) ժամաց. համար ոսկեայ քսակ։ 5) բասասիմ. կաշուց պօրտֆոնէ 6 բաժ. և մեխ. փականով, պարիսկան շքեղ շինուածք։ 6) Կաուչուկէ կնիք՝ ապապրողի անուն-հարանուն-ազգանունով։ 7) Ժամաց. գողերից պաշտպանող իր։ 8) Թասը. բլիոկոյ, էլեկտրա շինուածք. ախբոմատ. 4 ապակիով, որ մտածնում է իրերը ամենահեռու տարածութ. վրա։ 9) Խաշրաքացոյց—կենդանի պանորամա, որ ցոյց է տալիս միանգամայն բնական կերպով։ 10) Վեց հատ ամենահետաքրքիր պատկերներ խոշորացոյցի համար։ 11) Զբեղ ընծայ կանանց համար, որ բաղկացած է գուբէլէ ոսկոյց շինված մատանուց՝ ֆրանս. ատամանդներով, բրոշկայից և մի զոյգ օղերից։ 12) Ճն. տարան՝ որ պարունակում է մօտ 120 կաուչուկէ տառեր և թեանշաններ. անհրաժեշտ իր ամեն մի տան համար։ 13) Գրպանի շատ յարմար պրեսը նիկէլից։ 14) բրանի նէս էսէր՝ 4 հետաքրքր. առարկ.։ 15) Վերջին նոր ՈՒՈՅԹ! Ըէվոլվէր—գրպանի մշտական պատկիր։ 16) Գեղարդ. հետաքրքր՝ գրքոյկ, որ պարունակում է մօտ 100 նորագոյն ֆոկուսներ։ **Ամբողջ գարնիտուրի գինը 4 ր. 95 կ., իսկ 2 գարնիտուր՝ 9 ր. 30 կ.**։ յդպիսի գարնիտուր ամենարարէր յատկ. առարկ.—**5 ր. 70 կ.**, 2 հատ՝ **10 ր. 80 կ.**։ Ուրբանչիւր գարնիտուրը փակ ժամացոյցով՝ 1 բուրլի թանգ։

Խորհուրդ ենք տալիս բերել տալ լաւ տեսակը, որովհետև գնի մէջ զանազանութիւնը շատ քիչ է, իսկ յատկութեան մէջ զանազանութիւնը շատ։ Ուղարկում ենք վերադիր վճ. և առ. կանխավճարի։ Ճանապարհածախքը 45 կ. Սիրէք 80 կ.։ Հասցէագրել՝ Т-во «ПАТЕНТЪ», Варшава, Св. Креста отд. 124.

(18, 28) (В. 64509) 3—2

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Ի յիշատակ հայ գրերի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի 1913 թ. հոկտեմբերի 12-ից մինչև 1914 թ. հոկտեմբերի 12-ը բաց է անում

Հայերէն Հրատարակութիւնների Ցուցահանդէս

բաժին առ բաժին

Հոկտեմբերի 12—30 բացվեց ռուսահայ մամուլի բաժինը, որի առիթով տեղի ունեցան դասախօսութիւններ, կազմվեց և տպագրվում է ռուսահայ մամուլի բոլոր նշանաւոր յօդուածների գրախօսութիւնը և ռուսահայ բոլոր խմբագիրների խմբանկարը։

Հետզհետէ բացվելու են հետևեալ բաժինները. 1) Ազգագրական հրատարակութիւններ, 2) Արտասահմանեան պարբերական հրատարակութիւններ, 3) Վերածնութեան շրջանի հրատարակութիւններ (Էջմիածնի, Նոր-Զուղայի, Հնդկաստանի և այլն) և ընդհանրապէս ռուսահայոց հրատարակութիւններ, 4) Մխիթարեանների (Վենետիկի և Վիէննայի) հրատ., 5) Թիւրքահայոց հրատարակութիւններ (Պոլսոյ, Երուսաղէմի, Զմիւռնիայի, Արմաշի և այլն), 6) Ամերիկահայոց, 7) Եգիպտահայոց և 8) Պարսկահայոց հրատարակութիւններ։

Ընկերութիւնը ամեն ջանք գործ է դնում ձեռք բերելու հայերէն բոլոր հրատարակութիւնները, որպէս զի կարողանայ Վեհափառ Կաթողիկոսից տրամադրված Թիֆլիսի Վանքի մայր եկեղեցում մօտի էջմիածնապատկան հողաբաժնի վրա կառուցվելիք Ընկերութեան գրադարան-թանգարանի հոյակապ շէնքը բանալ հայերէն հրատարակութիւնների ընդհանուր, ամբողջական ցուցահանդէսով և այս մատենադարանը դարձնել հայ գրերի և տպագրութեան համազգային մեծ տան՝ ՄՆԱՑՈՒՆ ՑՈՒՇԱՐՁԱՆ։

Ուստի՝ Ընկերութեան խորհուրդը խնդրում է ամեն մի հայի ուղարկել իրան թէ իր և թէ այլ հրատարակութիւններ՝ հետևեալ հասցէով. Тифлисъ, Армянскому Этнографическому О-ву, կամ Société Ethnographique arménienne, Tiflis (Caucase).

Նախագահ՝ Ալ. Մելիք-Ազարեան
Անդամ-քարտուղար՝ Ե. Լալայեան

ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ

ՑԱՆԿԱՑՈՂՆԵՐԸ թող շտապեն պատուիրել։ Վերադիր վճարով պատուիրողները եթէ կանխիկ չը վճարեն գումարի էջը, անկասար կը մնան պատուէրները։ Հասցէն՝ Թիֆլիս, Մակար Զմշկեանին. Тифлисъ, Макару Чимишкяну.

(Ե.Կ.) 992. 10—6

ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԷՆ
Մ. ԶՄՇԿԵԱՆԻ
1914 Թ.
«ՊԱՏԻ», «ՍԵՂԱՆԻ», «ԾՈՑԻ»
ԵՒ
ԱՐՄԱՆՍԿԻՒ ԿԱԼԵՆԴԱՐ
ՍԸ ՊՐԵԴՍԱՅԱՆԻՆԵՐԻՆ
ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ

ՑԱՆԿԱՑՈՂՆԵՐԸ թող շտապեն պատուիրել։ Վերադիր վճարով պատուիրողները եթէ կանխիկ չը վճարեն գումարի էջը, անկասար կը մնան պատուէրները։ Հասցէն՝ Թիֆլիս, Մակար Զմշկեանին. Тифлисъ, Макару Чимишкяну.

(Ե.Կ.) 992. 10—6

1914 г. ОТКРЫТА ПОДПИСКА 1914 г.
(V-й годъ изданія)
НА ЖУРНАЛЪ
„ЖЕНСКОЕ ДѢЛО"

Въ теченіе года подписчики получатъ:
24 иллюстрированныхъ номера журнала по программѣ: вопросы общественные, въ связи съ женскимъ движеніемъ, педагогика, гигіена, беллетристика и поэзія, театръ и искусство, критическія статьи, историч. монографіи и біографіи замѣчательныхъ женщинъ.
Отдѣлъ моды и костюмовъ подъ редакціей спеціалистки-художницы г-жи Ирмы Лоранъ (M-me Irma Laurent).
Почтовый ящикъ—отвѣты на вопросы изъ области семейной, бытовой, юридической жизни, по гигіенѣ, хозяйству и т. д.
3 безплатныя приложенія: два альбома весеннихъ и осеннихъ костюмовъ, шляпъ и т. д., стоющихъ въ отдѣльной продажѣ по 1 рублю, и книгу по раціональной косметикѣ и гигіенѣ женщины.
Помимо этихъ прилож. подписчицамъ будутъ приложены выкройки моделей.

ПОДПИСНАЯ ЦѢНА со всѣми прилож., съ доставкой и пересылкой: Въ Россіи: на годъ—5 руб., на полгода—3 руб., на 3 мѣс.—1 р. 50 к. За границей: на годъ—7 руб., на полгода—4 руб., на 3 мѣс.—2 р. Цѣна отдѣльнаго № 20 к.

Подписка принимается въ главной конторѣ журнала „Женское Дѣло", Москва, Большая Дмитровка, домъ 26, а также во всѣхъ почтово-телеграфныхъ конторахъ и книжныхъ магазинахъ.

1057. 3—1 (Ե.)

№4711. ՎԱՐԴԻ ԲԻՒՐԵՂԵԱՅ ՍԱՊՕՆԸ

Դարձ են ածում ամենքը, որոնք գիտեն գնահատել գեղեցկութիւնը։

Տիպակ գործարանատէր ՖԵՐԴ. ՄԻԼՎԻՆՍ Գարֆիմէրիա № 4711. Կեօլն. Ռիգա. հիմ. 1792 թ.

Շնորհիւ իր մէջ պարունակող մեծ քանակութեան գլիցէրինի, «№ 4711 վարդի բիւրեղեայ սապօնը» կանոնաւոր գործադրողները պարտական են նրան իրանց՝ պատանեկան հասակին յատուկ՝ երեսի գոյնով, թաւշի նման կակուղ, մաքուր և քնքոյշ կաշւով, որոնք իսկական գեղեցկութեան նշանաբանն են կազմում։

Զարմանալի կակուղ փրփուր։ Հիանալի հոտ։ Մեծ անտեսութիւն։ Իսկականը միայն բոլոր պետութիւնները յայտարար. «№ 4711» մարկայով։

Լուրի գինը 25 կոպ.

(М. 358723) 9—4

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный